

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սուրբոյ Առաջին Տիկնոջ՝ Ասմա ալ Ասատի հրաւերով սուրբահայ համայնքի ներկայացուցիչները (Բերիոյ Դայոց Թեմի Ազգ. Վարչութիւն եւ 16 միութիւններ) Առաջնորդ Սրբազան Զօր՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանի գլխաւորութեամբ պաշտօնական այցելութիւն եւ հանդիպում ունեցան ժողովրդային պալատին՝ Դամասկոսի մէջ, 21 Ապրիլ 2018-ին:

Սրբազան Զայրը նախ բոլորին անունով շնորհակալութիւն յայտնեց այս եզակի հանդիպումին համար: Ներկայացուց համայնքի միասնական գործունեութիւնը տագնապի ընթացքին՝ վերականգնումի պատկերացումներն ու մշակուած ծրագիրը:



Առաջին Տիկնոջ իր գոհունակութիւնը յայտնեց մարդասիրական կազմակերպ եւ օրինակելի ծառայութեանց համար: Ուշադրութեամբ լսեց իւրաքանչիւր կազմակերպութեան գործունեութեան մասին: Խորախուսեց ներկաները, որ ոչ միայն շարունակեն իրենց աշխատանքները վերականգնումի գծով, այլեւ հրաւիրեն սփռուած սուրբահայերը վերադառնալու Սուրիա եւ մասնակցելու ընկերային այլազանութեան գեղեցիկ խճանկարի վերակերտման համար:

Անակնկալը մեծ եղաւ, երբ երկրի վսեմաշուք նախագահ՝ տոքթ. Պաշ-շար Զաֆեգ ալ Ասատը միացաւ պատմական ու ջերմիկ ընկերակցումներուն: Պրն. Նախագահը նախ անդրադարձաւ Սուրիոյ ընկերային կառուցուածքին եւ անոր մէջ հայ համայնքի կարեւոր ներկայութեան: Զրաւիրեց համայնքը իր ապրած փորձառութիւնը եւ հայրենասիրական դաստիարակութիւնը տարածելու շրջապատին մէջ, մասնաւորաբար տուն դարձի կոչով, ինչպէս նաեւ անվերապահ զօրակցութիւն յայտնեց վերականգնումի ծրագիրներուն:

Սուրբահայ համայնքի անունով ծաղկեփունջ մը եւ հայկական աստղ-նագործութիւն մը նուիրուեցաւ:

ԴԻՄՆ
ԱԶԳԱՅԻՆ ՍՈՍՆՈՐԴԱՐԱՆԻ

ՀԱԼԵՊԱՍՅՈՒԹԻՒՆԸ ՊԱՅՔԱՐԻ ԵՒ ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒՊՈՎ ՈՒՔԵԿՈՉԵՅ ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 103-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԸ

Հովանաւորութեամբ հայ երեք համայնքապետներուն, կազմակերպութեամբ հալէպահայ մշակութային միութիւններուն, Երեքշաբթի 24 Ապրիլ



2018-ին, ժամը 6.00-ին, Հալէպի «Գ. Եսայեան» սրահին ներս տեղի ունեցաւ ոգեկոչական կերթոնական հանդիսութիւն, ներկայութեամբ հայ երեք հա-

Լուսին Ապաճեան-Չիլաբոշեան
Շաբ. Էջ 16

«ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆԵ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒԱԼԻՏԻՅԻՆ ՄԵՐ ՄԱՍՆԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՂԱՐԵՅՈՒՄԸ». ՀՅՂ ԳԵՐԱՊՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Ժողովրդային շարժման արդիւնքում Հայաստանում ստեղծուել է մի իրավիճակ, որն արդէն օրեր շարունակ լարուածութեան մէջ է պահում ողջ հասարակութիւնը:

Բարեբախտաբար, մինչ այս պահը հնարաւոր է եղել խուսափել իրավիճակի հանգուցալուծման վատթարագոյն տարբերակներից: Անցնող օրերի ընթացքում ՀՀ Դաշնակցութիւնը հետեւողական ջանքեր է գործադրել համախոհութեան ձեւաւորման, երկխօսութեան միջոցով երկրի ու ժողովրդի շահերից բխող ընդունելի եւ ողջմիտ լուծում գտնելու ուղղութեամբ:



Այսպէս սակայն երկար չի կարող շարունակուել: Կարող են առաջանալ լուրջ մարտահրաւերներ: Համոզուած ենք, որ ստեղծուած իրավիճակը պէտք է հանգուցալուծուի բացառապէս սահմանադրականութեան եւ օրէնքների շրջանակներում:

Հաշուի առնելով առկա իրավիճակը՝ յայտարարում ենք քաղաքական կուսիցիային մեր մասնակցութեան դադարեցման մասին:

Առ այդ, Ազգային ժողովը պէտք է ընտրի ժողովրդի վստահութիւնը վայելող վարչապետ, որի ձեւաւորած կառավարութեան մշակած՝ պետութեան ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը ներառող ծրագիրը պէտք է նպատակ հետապնդի՝

- ա) լիցքաթափել ներքաղաքական լարուածութիւնը,
- բ) յարթահարել քաղաքական ճգնաժամը,
- գ) յստակ առաջնահերթութիւններ նախանշելով երաշխաւորել կուտակուած խնդիրների լուծումը,
- դ) լիարժէք ժողովրդավարական պայմանների ապահովմամբ նախապատրաստել եւ անցկացնել արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ:

25 Ապրիլ 2018թ.

ՍԱՂԿԵՄԱՏՈՅՑ ԵՒ ԱՐԵԱՆ ՏՈՒՇՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեամբ Հայ Երիտասարդաց Միութեան Վարչութեան, Երեքշաբթի, 24 Ապրիլ 2018-ի առաւօտեան ժամը 11:00-ին, Հալէպի Արամ



Մանուկեան ժողովրդային Տան դեմէն հալէպահայ առաջնորդներ եւ միութիւններու ներկայացուցիչներ շքերթով ՀՍԸՄ-ի փողերախումբին եւ արի-



արենյշներուն ընկերակցութեամբ ուղղուեցան Ս. Աստուածածին եկեղեցի՝ մասնակցելու Հայոց Յեղասպանութեան Նահատակներուն Ծաղկեմատոյցին: Հայ երեք համայնքապետերը, Սուրբոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռէիսեան, հայկական երեք կազմակերպութիւններու եւ Ազգ. Վարչութեան ներկայացուցիչները, ՀՀ Հալէպի գլխաւոր Հիւպատոսը, Սուրբահայ

Սեւան Ազարիկեան-Պարմաքչիզեան
Շաբ. Էջ 4

Խմբագրական

ԶԹԵՐԱԳՆԱՅԱՏԵԼ ԺՈՂՎՐԴԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ

Հայաստանի մեջ ծայր առած ժողովրդային շարժումին դրական զարգացումը առաջին յանդուգն քայլն էր Հայաստանի պետական համակարգը արմատական, ոստումնային բարեփոխման առաջնորդելու համար:

Տարիներ շարունակ զանազան կողմերի հնչող այս էական փոփոխություններուն կարեւորությունը խօսքի սահմաններուն մեջ ընկղմիլ սկսած էր: Ժողովուրդը, բայց մանաւանդ Հայաստանի երիտասարդությունը, այս բոլորը խօսքէն գործի, շարժումի, կտրուկ պահանջի վերածեց՝ շրջանցելով տատամսումի, կասկածի առաջնորդող ամեն տեսակէտ:

Հայաստանի քաղաքացիական հասարակությունը քաղաքական նոր մշակոյթ ձեւաւորելու առաջին ոստումը կատարեց անվախօրէն: Մեր պայծառ երիտասարդները, ուսանողները, խոհեմ ոստիկանները, բժիշկներն ու ժողովուրդի բոլոր խաւերը ներկայացնող տարրերը իրենց զսպուածութեամբ համայն աշխարհին ցոյց տուին, որ յեղափոխությունը անպայման արտաքին լծակներուն ծառայել կամ երկիրը ապակայունացնել չի նշանակեր: Անոնք ժողովրդավարութեան նոր էջ բացին մեր երկրէն ներս:

Վերջին տարիներուն, զանազան երկիրներու մեջ ծայր առած ժողովրդային շարժումները տարբեր լծակներու զոհը դառնալով բարեյաջող աւարտ չունեցան, ցաւօք, ու մասամբ նսեմացուցին խաղաղ ցոյցերու, ժողովրդային շարժումներու բիրտը պատկերը: Հիմնական պատճառը այդ ժողովուրդներուն գիտակցական մակարդակին, պայծառատեսութեան, զսպուածութեան եւ վճռակամութեան բացակայութիւնն էր, բայց մանաւանդ քաղաքական վերնախաւերու կողմէ հարցերը դիպակալ մօտեցումով լուծելու քաղաքական անխոհեմութիւնը, որուն հետեւանքով ալ ոչ միայն ապարդիւն դարձան շարք մը երկիրներու մեջ ծնունդ առած շարժումներ, այլեւ արտաքին ուժերու բացարձակ ազդեցութեան տակ տապալեցան:

Հայրենի մեր երիտասարդությունը համայն աշխարհին օրինակ դարձաւ ու շրջեց ժողովուրդին ներուժը անտեսող ու ժողովրդավարութիւնը արհամարհող բոլոր տեսակէտները: Ան, բացառապէս խաղաղ, նպատակային շարժումով, մեր երկրէն ներս քաղաքական մշակոյթի նոր որակ ձեւաւորեց ու քաղաքական բոլոր կողմերուն պարտադրեց բարեփոխումներու ոստումնային քայլերու դիմել, վերջ տալու անարդարութեան ու անսալու հասարակութեան պահանջներուն:

ՀՅԴ-ն միշտ ալ զօրավիգ կանգնած է ժողովրդային այն շարժումներուն, որոնք կը միտին ապահովել հայրենի մեր ժողովուրդին բարօրութիւնը, քաղաքացիին իրաւունքներուն պահպանումը: Այս շարժումը, սակայն, առաջին քայլն է, իսկ անոր վերջնական յաղթանակը պայմանաւորուած է երկրի մեջ համակարգային լուրջ փոփոխություններու ձեռնարկումով, յառաջացած հարցերուն լուծման առաջնորդող քայլերով, խորհրդարանական արդար ընտրություններով:

Սոսկ անձերու փոփոխութեամբ համակարգը չի փոխուիր, ոչ ալ արմատական բարեկարգումներ տեղի կ'ունենան: Անհրաժեշտ է, որ քաղաքական բոլոր ուժերը, մէկ կողմ դնելով իրենց տարակարծութիւնները, հաւաքական պատասխանատուութեամբ մօտենան այս շարժումին, համախոհութիւն ձեւաւորեն, օգնեն, ներդրում բերեն Հայաստանի ժողովրդային այս զարթօնքին, սահմանադրութեան եւ օրէնքներու հիման վրայ երկխօսութեամբ, բանակցութիւններով արմատական փոփոխություններու ուղղուելու եւ երիտասարդութեան յոյսը, պայքարը, ձգտումները կեանքի կոչելու համար:

Պահը լուրջ է ու քաղաքական հեռատեսութիւն թելադրող: Ժողովրդային այս շարժումէն տեսանելի բարիք պէտք է ծնի վերջապէս, որպէսզի երիտասարդությունը չհիասթափուի: Անցեալի էջը փակուած է: Նոր պայմաններու լոյսին տակ, նոր ու արդար մօտեցումով գործելու հրամայականն է տիրողը:

«Գ.»

-Ինչպէս մեր թերթի առաջին էջով տեղեկացուցինք, Հայոց Տեղասպանութեան ոգեկոչական օրերու նախօրէին, Սուրիոյ նախագահ տոքթ. Պաշար ալ Ասատ եւ Առաջին Տիկին Ասմա ալ Ասատ ընդունեցին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Ծահան Սրբ. Արք. Սարգիսեանն ու Ազգ. Վարչութեան եւ հայկական միութիւններու ներկայացուցիչները:

Նախագահը այս առիթով բարձրօրէն գնահատեց հայ համայնքին շինիչ դերը Սուրիական Հայրենիքի դիմագրաւած ծանր օրերուն ու ըսաւ. «Հայրենասիրութիւնը լոյս սքերով չէն արտայայտեր: Հայրենասիրութիւն կը նշանակէ պատկանելիութեան զգացում, հայրենի հողի պաշտպանութիւն:



Կը նշանակէ, որ մեզմէ իւրաքանչիւրը իր ներդրումը բերէ ամենալաւ ձեւով, անկախ իր ազգային կամ ցեղային պատկանելիութենէն:

«Մեր ներկայ մարտահրաւերը ոչ թէ միայն պատերազմին հետեւանքով մեր երկրին քանդուած ենթակառոցները վերականգնելն է, այլ վերակազմաւորելն է սուրիական ընկերությունը իր բազմաշերտ ու գունեղ հիւսուածքով: Սա է, որ կը յատկանշէ սուրիական ընկերությունը այլ ընկերություններէ:



«Այս փուլին, անհրաժեշտ է, որ սուրիական ընկերութեան բոլոր շերտերը համարկուին եւ փորձառութիւններու փոխանակումով հարստանան, որպէսզի իւրաքանչիւր շերտ ինքնիր մէջ փակուած չմնայ, ընդհակառակն. գործակցելով զարգանանք ու զարգացնենք մեր երկիրը:

«Քաղաքացիական հասարակությունը կարեւոր գործօն է երկրի վերականգնումի աշխատանքներուն մէջ, ուստի անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել, որ պետական եւ ոչ-պետական կողմերու աշխատանքները հա-



մալրուած ըլլան ու ծառայեն Սուրիոյ ժողովուրդին՝ երկրի բոլոր հատուածներուն մէջ:

«Քաղաքացիական հասարակութեան զարգացման մէջ էական դեր ունին ոչ միայն բարեսիրական, այլեւ մշակութային, ընկերային եւ կրթական ծրագիրները, յատկապէս գիւղերուն մէջ:

«Այս բոլորին մէջ, կը հաւատամ, մեծ է դերը հայ համայնքին»:

Լուրեր Հայաշխարհին

ՀՅ ԴՆՇԱԿՉՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆԱԿԵՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՐՈՒՄԻ ԶԱՆԵՐԸ

Հրանդ Մարգարեան. «Յանուն Երկրին Ու ժողովուրդին Չիջիլը Պետք է Բոլորին Համոզումը Դառնայ, Որպեսզի Կարելի Ըլլայ Հանգուցալուծումը»

Հայաստանի մեջ ծայր առած ժողովրդային բողոքի շարժումն օրեր ետք, մեկնարկը տրուեցաւ կացութեան հանգուցալուծման: Այս տեղաշարժին առումով իր դրական ազդեցութիւնը ունեցաւ ՀՅ Դաշնակցութեան նախաձեռնութիւնը՝ իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ երկխօսութեան հարթակ ստեղծելու առումով:



Հանգուցալուծման համար տեղի ունեցած խորհրդակցութիւններուն ծիրին մէջ, վարչապետ Սերժ Սարգսեան հրաժարեցաւ, իսկ Ազգային ժողովի երեք ընդդիմադիր պատգամաւորները ազատ արձակուեցան: Ազդանշան տրուեցաւ Հայաստանի ժամանակակից պատմութեան նոր փուլի սկզբնաւորութեան:

Հրանդ Մարգարեանի Հանդիմանը Նիկոլ Փաշինեանի Հէտ

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան 23 Ապրիլին հանդիպում մը ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի պատգամաւոր, ժողովրդային շարժումի առաջնորդ արգելափակուած Նիկոլ Փաշինեանի հետ:

Հանդիպումէն ետք Հրանդ Մարգարեան յայտնեց, որ Փաշինեանի հետ խօսակցութիւնը արդիւնաւորուած է՝ յոյս յայտնելով, որ անկիւս կը շարունակուի՝ աւելցնելով, որ ցարդ այդ խօսակցութեան կապուած արդիւնքներ չկան:

«Մենք անցնող 5-6 օրերուն ընթացքին այս տեսակի ծաւալուն աշխատանքներու մէջ եղած ենք՝ տար-

«Կարելի է, որ այս պահուն փողոցը շատ աւելի զգոյշ ըլլայ, ժո-



ղովրդային շարժումը շատ աւելի զգոյշ ըլլայ, սադրանքներու չենթարկուի, իր խաղաղ բնոյթը պահպանէ, որպէսզի լուծում գտնելու կարելիութիւն ստեղծենք», ըսաւ ան:

Հ. Մարգարեան հաստատեց, որ իրենք ամէն ճիգ ու ջանք կը թափեն, առանց անհատական կամ կուսակցական շահերու: «Երկիրն ու մեր ժողովուրդն է, որ հիմնական արժէք է: Մենք անոր կը հաւատանք եւ անկիւս՝ յանուն երկրին ու ժողովուրդին զիջիլը, պէտք է համոզումը դառնայ բոլորին, որպէսզի կարելի ըլլայ հանգուցալուծում կատարել», յայտնեց ան:

Հրանդ Մարգարեան եզրափակեց ըսելով, որ ըստ իր տեղեկութիւններուն, Նիկոլ Փաշինեանի, Արարատ Միրզոյեանի եւ Սասուն Միքայելեանի ձեռնարկած օրակարգով Ազգային ժողովի արտակարգ նիստ չ'է նախատեսուած, «իսկ զանոնք անձեռնմխելիութենէ զրկելու հարցը Ազգային ժողովի օրակարգին վրայ չ'է ներառուած», հաստատեց ան:

Հանդիպումէն ետք Հրանդ Մարգարեան հեռաձայնային հարցազրուցութիւն մը ունեցաւ Փաշինեանի կնոջ՝ Աննա Յակոբեանի հետ:



բեր կողմերու եւ անձնաւորութիւններու հետ, որպէսզի կարելի ըլլայ երկրին դիմաց կանգնած այս թնժուկը լուծել», ըսաւ ան:

Հ. Մարգարեան շեշտեց, որ կարելի է այն է, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կը մերժէ ձեռքաւարկութիւնները, ինչպէս նաեւ կը մերժէ, երբ մարդիկ վերջնագիրներով կը խօսին: «Մենք կը հաւատանք, որ Հայաստանի ու հայ ժողովուրդին համար երկխօսութիւնը անհրաժեշտ է: Պետք է մենք կարենանք սթափիչ եւ առիթ տանք, որ այդ երկխօսութիւնը տեղի ունենայ, որպէսզի այդ լուծումը գտնենք՝ եւ երկիրը դէպի ցնցում չ'առաջնորդենք»:

Սերժ Սարգսեան Հրաժարեալ Տուտ

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Սերժ Սարգսեան 23 Ապրիլի յետմիջօրէին հրաժարական տուաւ: Հրաժարականը ներկայացուեցաւ պաշտօնական կայքին վրայ:

Ստորեւ՝ հրաժարականին բնագիրը.

«Սիրելի՛ հայրենակիցներ,

Դիմում եմ Հայաստանի Հանրապետութեան բոլոր քաղաքացիներին, մեծերին ու իմ սիրելի երիտասարդներին

կանանց ու տղամարդկանց,

Դիմում եմ փողոցներում «Մերժիր Սերժին» կոչով օր ու գիշեր կանգնածներին եւ փակ փողոցներով այս օրերին դժուարութեամբ աշխատավայր հասնող եւ իրենց պարտքն անտրտում իրականացնողներին,

Դիմում եմ ուղիղ եթերի առաջ օրերով գամուածներին եւ օր ու գիշեր



հասարակական անվտանգութիւնը տղամարդու պէս ապահովողներին,

դիմում եմ սահմանին կանգնած մեր քաջարի զինուորներին ու սպաներին, դիմում եմ իմ զինակից ընկերներին,

Դիմում եմ իմ կուսակից ընկերներին, քաղաքական բոլոր ուժերին եւ գործիչներին:

Որպէս երկրի ղեկավար դիմում եմ վերջին անգամ:

Նիկոլ Փաշինեանը ճիշդ էր: Ես սխալուեցի: Ստեղծուած իրավիճակն ունի մի քանի լուծում, բայց դրանցից ոչ մէկին ես չեմ գնայ: Դա իմը չ'է: Ես թողնում եմ երկրի ղեկավարի, Հայաստանի վարչապետի պաշտօնը:

Փողոցի շարժումն իմ պաշտօնավարման դէմ է: Ես կատարում եմ ձեր պահանջը:

Խաղաղութիւն, ներդաշնակութիւն եւ տրամաբանութիւն մեր երկրին: Շնորհակալ եմ»:

Նշենք, որ սահմանադրութեան 149-րդ յօդուածը կ'ըսէ. - «Վարչապետի ընտրութիւնը եւ նշանակումը վարչապետի հրաժարական ներկայացնելու կամ վարչապետի պաշտօնը թափուր մնալու այլ պարագաներու կառավարութեան հրաժարականի ընդունուելէն ետք՝ եօթնօրեայ ժամկետի մէջ, Ազգային ժողովի խմբակցութիւնները իրաւունք ունին առաջադրելու վարչապետի թեկնածուներ»:

Ազգային ժողովը վարչապետը կ'ընտրէ պատգամաւորներու ընդհանուր թիւի ձայներու մեծամասնութեամբ: Վարչապետ չ'ընտրուելու պարագային քուէարկութենէն եօթը օր ետք կը կազմակերպուի վարչապետի նոր ընտրութիւն, որուն մասնակցելու իրաւունք ունին պատգամաւորներու ընդհանուր թիւի առնուազն մէկ երրորդի առաջադրած վարչապետի թեկնածուները: Եթէ պատգամաւորներու ընդհանուր թիւի ձայներու մեծամասնութեամբ վարչապետ չ'ընտրուի, ապա Ազգային ժողովը կ'արձակուի իրաւունքի ուժով: Վարչապետի ընտրութիւն տեղի կ'ունենայ անուանական քուէարկութեամբ: Հանրապետութեան նախագահը անյապաղ վարչապետ կը նշանակէ Ազգային ժողովի կողմէ ընտրուած թեկնածուն»:

ՆԱԽԱԳԱՀ ԱՐԻՄԵՆ ՍԱՐԳՍԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՇՄՐԱԿԱՆԸ

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսեան 23 Ապրիլին ստորագրեց հրամանագիր մը, որով ընդունեց Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան հրաժարականը:

Հայաստանի Հանրապետութեան նախագահի հրամանագիրին մէջ ըսուած էր.

«Հիմք ընդունելով Սահմանադրութեան 130-րդ յօդուածը. Ընդունիլ կառավարութեան հրաժարականը»:

ԴՆՇԱԿՉԱԿԱՆ ՆԱԽՄԱՐԱՆԵՐԸ ԵՒ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԸ ՀՐԱՇՄՐԱԿԱՆ ՏՈՒՒՆ

26 Ապրիլին, ՀՀ տարածքային կառավարման՝ գարգացման նախարարի ժամանակաւոր պաշտօնակատար Դաւիթ Լոքեան, ՀՀ կրթութեան՝ գիտութեան նախարարի ժամանակաւոր պաշտօնակատար Լեւոն Մկրտչեան, ՀՀ բնապահպանութեան նախարարի ժամանակաւոր պաշտօնակատար Արծուիկ Միլասեան, ինչպէս նաեւ ՀՀ Շիրակի մարզպետ Արթուր Խաչատրեան ու ՀՀ Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնեան իրենց հրաժարականի դիմումները ներկայացուցին:



ՀՀ Դաւիթ Լոքեանի կապերու գրասենյակ 26.04.2018 թ.

ՄԵՐ ՈՍԿԵԱՅ ՊԱՏԵՀՈՒԹԻՒՆԸ



Կաթո Արմենյան

ՀՀ Դաշնային Գերագույն Մարմնի յայտարարությունը կառավարական դաշինքին դուրս գալու մասին վաղուց սպասուած ջրբաժան մըն է, որ աշխատանքի հսկայ նոր ասպարեզ մը կը բանայ Դաշնակցութեան առջեւ վերջին օրերու մահացու շփոթներէն արագօրէն ձերբագատուելու եւ մեր պետականութեան կառուցման գործին նորոգելու թափով նուիրուելու:

Յայտարարութեան մէջ յստակօրէն կը խօսուի խորհրդարանի նոր ընտրութիւններ կայացնելու պահանջին մասին. քաջ մը՝ որ կենսական նշանակութիւն ունի այսօր մեր երկրին համար եւ քաղաքական ոստիկնի հրա-



մայական պատեհութիւն մըն է երկրի ժողովրդավարական ուժերը անսխալ ընթաց տարողութեամբ գործաշարժի ենթարկելու: Իմ կարծիքով, վաղուան խորհրդարանի ձեւաւորումը առաջնահերթ եւ կենսական խնդիր է այսօր ամէն հայու համար: Թող ներուի ինծի ըսել, որ մենք ազգովին իրաւունք չունինք պատմական այս պահը պատահականութիւններու գոհ տալու:

Մեր երկրի քաղաքական բեմին վրայ դեռեւս կը գործեն հասարակութեան խարդախ ուղորտի ուժերը կապուած մենաշնորհային համակարգի



սարդոստայնին եւ անոնք անպայման պիտի շղթայազերծեն իրենց բոլոր կարողականութիւնները առեւանգելու համար վաղուան խորհրդարանը: Կասկած մի՛ ունենաք: Մեր պարտաւորութիւնն է այժմէն իսկ իջնել հրապարակ եւ առնել բոլոր անհրաժեշտ քայլերը ընտրակաշառքի յայտնի գործօնները

իրենց բոյներուն մէջ խեղդելու եւ հիմնական վերանայման ենթարկելու երկրի ընտրական օրէնքը:

Այս նոր յառաջընթացի բովին մէջ, կասկած չկայ, որ Դաշնակցութիւնը անելի ամբողջականօրէն պիտի գրաւէ իր տեղը երկրի քաղաքական դաշտին մէջ եւ նոր ուժականութեամբ տեր կանգնի ժողովրդական այն լայն շերտին, որ իր բնական կազմախօսութեամբ իսկ Դաշնակցութեան քաղաքական գործի հարազատ հողը կը ներկայացնէ եւ երկրի զարգացման մեծ խարխիւը: Միաժամանակ մեր գործը պիտի ըլլայ քաղաքական դաշտէն ի սպառ դուրս քշել Հանրապետական Կուսակցութիւնը քաղաքական բռնամիջոցներու իր մեքենականութեամբ: Մեր գործը պիտի ըլլայ միանգամընդմիջտ ազատել քաղաքական բռնադատումներու գոհ մեր երկրի քաղաքացին:

Պարզ խօսքով, յառաջիկայ ընտրութիւնները մեր ոսկեայ պատեհութիւնն են օլիգարխիան իր գէնքերէն գրկելու եւ Հայաստանի քաղաքական դաշտը ժողովրդավարութեան բնականօրէն չափանիշներուն ենթարկելու: Երկրին քաղաքական մշակոյթը փոխելու մեծ շրջադարձը այս ընտրութիւններու բովին մէջ է, որ պիտի իրագործուի եւ հետեւաբար վաղուան յարա-ցոյցին եւութիւնը հոս է, որ պիտի ճշդուի:

Ասիկա մեր ժողովրդավարութեան նոր օրն է, մեր երկրի նոր գարթնքը. եւ մեր նոր երթը դէպի իրաւական հզօր պետականութիւն, որուն անկեղծ գիտարարն է Դաշնակցութիւնը այժմ եւ միշտ եւ յաւիտեան: Բարի երթ բոլորիս:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

«Գանձասար» շնորհակալութիւն կը յայտնէ ՍՕ Խաչի Շըրջանային Վարչութեան, թերթիս կատարած /50.000/ ա.ոսկի նուիրատուութեան համար, յատկապէս նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՍՕ Խաչը մշտապէս կը խրախուսէ հայ թերթին ընթերցումն ու տարածումը:

ՍԱՐԿԵՄԱՏՈՅՑ...

Սկիզբ՝ էջ 1

Օգնութեան Խաչի, ՀԱՄԻ-ի, Համագայինի, Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի Շրջ. Միութեան, ՍԵՄ-ի, Պատանեկան Միութեան եւ «Զրիստափոր» Ուսանողական Միութեան ներկայացուցիչները, Աստուածածին Եկեղեցւոյ շրջափակին մէջ գտնուող Հայոց Յեղասպանութեան յուշակոթողին դիմաց ծաղկեպսակներ գետեղեցին ու յարգանքի տուրք մատուցեցին Հայոց Յեղասպանութեան սրբադատուած նահատակներուն յիշատակին ծաղկեպսակներ գետեղեցին նաեւ Հալեպի ճարտարարուեստի, առեւտրական եւ գրասաշրջութեան պետական գրասենեակներուն տնօրէնները: Այնուհետեւ Եկեղեցւոյ ներքնասրահին մէջ տեղի ունեցաւ արեան տուչութիւն, որպէս երախտագիտութեան արտայայտութիւն Սուրիոյ ասպնջական ժողովուրդին, որ Հայոց Յեղասպանութենէն ճողոպրած մեր ժողովուրդի գաւակներուն վերապրելու եւ ծաղկելու առիթ ստեղծեց: Բարի գալուստի խօսքէն ետք, Սարին Թովմասեան ներկայները հրաւիրեց մէկ վայրկեան յոտընկայս յարգելու հա-

մար Հայոց Յեղասպանութեան նահատակներուն յիշատակը: Արաբերէն բացման խօսք արտասանեց Սոնա Տարագճեան, որ արեան տուչութեան այս արշաւը երախտագիտութեան զգացումի մէկ արտայայտութիւնը համարեց սուրիացի մեր քոյր-եղբայրներուն: Հայերէն բացման խօսքով Թամար Գատեհճեան դիտել տուաւ, որ հայ ժողովուրդը Սուրիոյ մէջ եղած է ուղղամիտ քաղաքացի եւ իր արիւնը չէ խնայած պաշտպանելու իր երկրորդ հայրենիքը՝ Սուրիան: Ան աւելցուց որ մենք այսօր արեան տուչութեամբ կը դառնանք մէկ ժողովուրդ՝ ունենալով մէկ թշնամի:

Ապա Արա Մութաֆեան ասմունքեց իր հեղինակած «Չես կըրնար երկու անգամ ոչնչացնել ցեղս» քերթուածը: Ներկայները պատահի վրայ դիտեցին աշխարհի ծագերուն տեղի ունեցած պահանջատիրական ցոյցեր եւ տարբեր երկիրներու մէջ Հայոց Յեղասպանութեան նուիրուած յուշակոթողներ: Այնուհետեւ բժիշկներու հսկողութեամբ տեղի ունեցաւ արեան տուչութեան արշաւը: Հարիւրաւոր հայրորդներ իրենց արիւնը նուիրաբերեցին սուրիական պատերազմի վիրաւորուած բանակի զինուորներուն:

ԳՈՅԺ

**ԱՐՆԻ. Տ. ՊԵՏՐՈՍ ԱՐՔ. ՄԻՐԻԱԹԵԱՆ
ԱՌԱՋՆԱՐԿ ԲԵՐԻՈՅ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՅՈՅ
ԲԵՐԻՈՅ ԹԵՄԻ ՆԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԿՂԵՐԸ
ՃԷՆԾԻ ԸՆՏԱՆԻՔԸ
ԿԸ ԳՈՒԺԵՆ ՎԱԽՃԱՆՈՒՄԸ
ԼՈՒՍԱՎՆՈՒԹԻ
Ն.ԵՂԻՇԷ ՎՐԴ. ԸՆՏԻԻ**



որ ի Տեր հանգեցաւ Երկուշաբթի, 23 Ապրիլ, 2018-ին՝ արկածի մը հետեւանքով:

Յուդարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 26 Ապրիլ 2018, առաւօտեան ժամը 11:00-ին, Հայ Կաթողիկէ Ս. Խաչ Աթոռանիստ Եկեղեցւոյ մէջ:

Ճանօթ. Լուսահոգի վարդապետին մարմինը հանգչած էր Ս. Խաչ Աթոռանիստ Եկեղեցւոյ դահլիճին մէջ: Այցելութիւնները տեղի ունեցան առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ ժամը 1:00, իսկ երեկոյեան ժամը 4:00-էն մինչեւ ժամը 8:00-ը:

Յետ թաղման կարգին, ցաւակցութիւնները ընդունուեցան Ս. Խաչ Աթոռանիստ Եկեղեցւոյ դահլիճէն ներս, մինչեւ երեկոյեան ժամը 8:00-ը, ինչպէս նաեւ Ուրբաթ, 27 Ապրիլ 2018-ին, առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ ժամը 1:00:

ՄԻՋՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՅՈՒՇԱՅԱՆԴԵՍ ՀԱԼԵՊԻ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՆԵՐՍ

«Այսքան չարիք թե մոռանան մեր որդիք, թող ողջ աշխարհի հայուն կարողայ նախատինք» (Ա. Իսահակեան): Այս սկզբունքն մեկնելով, 23 Ապրիլ 2018-ի երեկոյան ժամը 7:00-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Միջարանական յուշահանդէս, հովանաւորութեամբ

իր պատկերին համաձայն, իւրաքանչիւր ազգի տուած է իր յատկութիւններն ու սահմանները եւ այդ սահմանները աղաւաղելը Աստուծոյ կամքին դէմ գործել է: Յանուն Հայ Կաթողիկէ Համայնքին, իր պատգամը տուաւ Բերիոյ Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդ Արհ. Տ. Պետրոս Արք.

ւորականութեան բնաշնչումով ցեղասպանութեան ենթարկուեցան նաեւ հայ մշակոյթն ու հոգին: Պատմութեան յետադարձ հայեացք մը նետելով, Տէր Յուսիկ նկատել տուաւ որ. «Ե. դարուն Վարդանանց Նահատակութեան խորհուրդը հայրենիքի ու խղճի ազատութիւնն էր, նոյնն է այսօրուան Նահատակութեան խորհուրդը»: Ապա մի առ մի ներկայացուց Թուրքիոյ ի գործ դրած ոճիրները՝ սուրիական Իսկէնտերունի ու Հիւսիսային Կիպրոսի բռնագրաւումը, որոնք պիտի չպատահէին, եթէ թուրքը պատժուեր հայութեան դէմ իր գործած ոճիրներուն համար: Եզրափակելով օրուան բանախօսը ըսաւ. «Առաջին՝



հայ երեք հոգեւոր պետերուն եւ կազմակերպութեամբ Հայ Առաքելական Համայնքին: Հանդիսութեան սկիզբը, օրուան բեմավար Տ. Խորեն Զինյ.



Միրիաթեան, որ իր խօսքին մէջ անդրադարձաւ ներելու քրիստոնէական հասկացողութեան, դի-



պետք է ջանանք մեր դատի արդար լուծումին հասնիլ, երկրորդ՝ պետք է զօրանալ նիւթապէս, երրորդ՝ պետք է զօրանալ գիտական մարզին մէջ, չորրորդ՝ պետք է զօրանալ դիւանագիտական բարձր մակարդակի յարաբերութիւններ մշակելով եւ այս բոլորով զսպանակուած աշխատիլ»:



տել տալով ներելու պայմանները՝ առաջին յանցաւորը պետք է ընդունի իր յանցանքը, երկրորդ՝ զոյջայ անոր համար եւ երրորդ՝ հատուցէ գործած ոճիրին համար: Առանց հատուցման՝ առաջին երկուքը անիմաստ են:


Աւարտին, իր պատգամը տուաւ Հայոց Բերիոյ Թեմի Առաջնորդ Գեր. Տ. Շահան Սրբ. Արք. Սարգիսեան, որ շեշտեց թէ կարեւոր է յոյս ունենալ՝ դիտել տալով, որ եթէ չըլլար ժողովուրդին կամքն ու աստուածային նախախնամութիւնը, մեր արմատները առ յաւեր պիտի ոչնչանային եւ մենք ո՛չ այստեղ եւ ոչ ալ այլուր գոյութիւն պիտի ունենայինք: Տէր Շահան անցնելով ըսաւ,



Հայրենիքի եւ ապրիլեան բոլոր նահատակներուն: Ան յատկապէս խնդրեց արօթքով յիշել նորոք վախճանեալ Հայ Կաթողիկէ Համայնքի հոգեւորականներէն Զ. Եղիշէ Վարդ. Ծանճին: Ապա բացման խօսք արտասանեց Տ. Տաթև Աւագ Զինյ. Միջայլեան: Ան յայտնեց, որ 103 տարի առաջ Հայոց Յեղասպանութիւնը իրագործած նոյն թուրքը, այսօր կը վտանգէ քրիստոնէաներուն ներկայութիւնը Միջին Արեւելքի մէջ: Ան շեշտեց միասնականութեան կարեւորութիւնը՝ դէմ դնելու թըշնամիին ծրագիրները:



Գեղարուեստական բաժնին մաս կազմած էր Ս. Աստուածածին եկեղեցւոյ դպրաց դասը, դեկավարութեամբ բժիշկ Սարգիս Իսկէնեանի: Ներկայացուեցան հայաշունչ շարք մը երգեր ու շարականներ, ինչպէս՝ «Չիւտուրի Մօր երգը», «Ձօն Նահատակաց», «Գոչեմ գձեգ» եւ «Տէր Ողորմեա»: Դպրաց դասի նորահաս դպրուհիներէն եռեակ մը ներկայացուց «Ես Կամ» երգը:



որ վկայութիւնը ու մարտիրոսութիւնը կ'իրականանան կեանքի գնով, արեան գնով, եւ այս է իսկական հաւատքի դրսեւորումը, իսկ մեր գոյութեան

Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վեր. Յարութիւն Սելիմեան իր պատգամը տալով ըսաւ, որ Հայոց Յեղասպանութիւնը զուտ ազգային կամ նոյնիսկ միջազգային խնդիր չէ, այլ՝ առաւելաբար աստուածաբանական, որովհետեւ Աստուած մարդը ստեղծեց

Օրուան բանախօսն էր Տ. Յուսիկ Ա. Զինյ. Սեդրակեան, որ նախ անդրադառնալով Տեղապանութեան պայմաններուն ըսաւ. «Թրքական պետական ոստիկանութեան ու գիւտարական ուժերով գործարդուեցաւ տեղահանութիւնը ամբողջ ժողովուրդի մը՝ սուրի, սովի միջոցով»: Բանախօսը յայտնեց, որ հոգեւորականութեան ու մտա-



եան միակ գրաւականը մեր միասնականութիւնն է: Այսօր ատելի քան երբեք մեր նահատակները մեզմէ այս կը պահանջեն:

Հանդիսութիւնը փակուեցաւ Տէրունական Աղօթքով

Յովհաննէս Օհանեան

«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵՆԷՆ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ» ԽՈՐԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՑՈՒՑԱՆՆԵՐԸ

Հովանավորությամբ՝ Հայաստանի Հանրապետության 100 ամեակի Սուրբ Կեդրոնական Մարմինին, կազմակերպությամբ՝ ՍԵՄ-ի Կեդրոնական Վարչության տեղի ունեցավ «Ցեղասպանությունն Անկախություն» խորագիրը կրող ցուցահանդես 26, 27, 28 Ապրիլ 2018-ին, Արամ Մանուկեան Ժ. Տան «Լեւոն Շանթ» սրահին ներս:

Պաշտոնական բացումը տեղի ունեցավ Չորեքշաբթի 25 Ապրիլ 2018-ին, երեկոյան ժամը 6.00-ին, ձեռնամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Ս. Արք. Սարգիսեանի և ՀՀ Հանրապետության Կրթության նախարար Վահրամյանի կողմից:



Ժամանակաշրջանին հայ ժողովուրդին մղած հերոսամարտերը, սկսելով Չեչենիայից և Կաբուլից մինչև Սասնոյ, Վանի, Շապին Գարահիսարի, Մուսայ լեռան

և Ռուֆայի ինքնապաշտպանական մարտերը:



յին Վարչության ներկայացուցիչներ, հալեպահայ միություններու և կրթական հաստատություններու ներկայացուցիչներ և հրաւիրեալներ:

Յաջորդ տաղաւարով ներկայացուած էր աշխարհի տարածքին հայ դատի կեդրոնական գրասեն-



Սրահը զարդարուած էր Հայոց Ցեղասպանութիւնը մատնանշող պատկերներով և Հայաստանի Ա. Հանրապետութեան զինանշանով: Ներկաները շրջեցան ցուցահանդեսի տաղաւարները և դիտեցին ցուցադրուած պատմական լուսանը-

բանները իրենց հիմնադրութեան թուականներով՝ 1984 Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ, 1991-ին Հայ Դատի Կեդրոնական Խորհուրդը Հայաստանի մէջ, 1993-ին Մոսկուայի մէջ, 2002-ին Եւրոպայի մէջ և 2005-ին Միջին Արեւելքի մէջ:



կարները, ունկնդրելով կազմակերպող մարմինի երիտասարդներուն բացատրութիւնները մեծ հետաքրքրութեամբ:

Տաղաւարները կ'ընդգրկէին 1915-ին, Հայոց Ցեղասպանութեան

Այնուհետեւ աշխարհի մագէթով նշուած էր աշխարհի գանազան երկիրներու մէջ ապաստանած սփիւռքահայերու ներկայ թուապատկերը:

Յատուկ կարեւորութեամբ նըշ-

ուած էր Հայոց Ցեղասպանութիւնը ընդունած բարեկամ երկիրները, թիւով՝ 29, որոնցմէ չորսը ցարդ ամբողջութեամբ չեն ընդունած:

«Կառոյցներ» խորագիրով տաղաւարին մէջ լուսանկարներով ցուցադրուած էր աշխարհի գանազան վայրերու հայկական կառոյցներն ու եկեղեցիները, ինչպէս՝ Հայոց Ցեղասպանութեան յուշահամալիրի կառոյցի շինութիւնը, Օփերայի շէնքը, Տեր Զօրի Սրբոց Նահատակաց եկեղեցին, Զարէն Եփէի Ազգ. Ճեմարանի տարածքը նախ որպէս որ-



բանոց ապա դպրոց և շատ մը այլ կառոյցներ:

Հայաստանի Ա. Հանրապետութեան 100 ամեակը ոգեկոչելով կազմակերպող մարմինը ցուցադրած էր այդ ժամանակաշրջանի հայ դիւանագէտներու, նախարարներու, մտաւորականներու, վարչապետներ-



րու լուսանկարները: Ակներեւ էր Տիւանա Աբգարի լուսանկարը, որ աշխարհի առաջին հայ դեսպանը հանդիսացած է ճափոնի մէջ: Յատուկ կարեւորութեամբ ցուցադրուած են Հայաստանի Հանրապետութեան զինանշանը և եռագոյն դրօշը իրենց բացատրողականներով, ինչպէս նաեւ Հայաստանի Ա. Հանրապետութեան կառավարութեան հրապարակած հայկական դրամանիշերն ու դրոշմաթուղթերը:

ացեալ և Անկախ ըլլալը: Արեւմտեան Հայաստանի քարտեզին վրայ ներկաները ցալկներով կշեցին իրենց նախահայրերուն ծննդավայրերը:

Սրահին մէջ ցուցադրուած հայկական նախշերով իրերը, ինչպէս նաեւ Հայոց Ցեղասպանութեան և արեւմտահայոց պատմութիւնը անմահացող հրատարակութիւնները հայաբոյր շունչ ու աւիւն փոխանցեցին այցելուներուն:



Բացման խօսք ներկայացուց ընկերուի Անի Մկրտիչեան, կշեղով որ ցուցահանդեսին հիմնական նպատակն է պահանջատիրութեան ոգին զօրացնել մեր մէջ և Հայոց Ցեղասպանութենէն ետք հայ ժողովուրդին կեանքը ի միտի բերել դէպի վերանորոգում և գոյատեւում: Այնուհետեւ ան հրաւիրեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահան Ս. Արք. Սարգիսեանը փոխանցելու իր սրտին խօսքը: Սրբազան Հայրը տոյն նախաձեռնութիւնը գեղեցիկ առիթ մը համարեց երի-

տասարդներուն աշխատանքի մղելու և անոնց գիտցած տեղեկութիւնները ցուցադրելու, ողջունելով իրենց տուած շահեկան բացատրութիւնները:

Սրբազան Հայրը մէջբերեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հետեւեալ խօսքը. «Երիտասարդութիւնը մեր ապագան է, այլ՝ մեր ներկան և ապագան է» հրաւիրելով յատուկ հոգատարութիւն ցուցաբերել և առիթ ընծայել երիտասարդներուն, որպէսզի ղեկավարելու պատրաստ դաստիարակուած սերունդ մը ունենանք:

Առաջնորդ Սրբազան Հայրը Հայաստանի անկախութեան 100 ամեակը մեր գիտակցութիւնը բարձրացնելու առիթ մը համարեց, հրաւիրելով հայ ժողովուրդի գաւազանները ամեն բանէ բարձր դասել ազատ, անկախ և ամբողջական հայրենիքի կերտումը:

Տուցահանդեսը կը շարունակուի 3 օրերու տևողութեամբ:

Սարիսա Պողիկեան

ՀԱԼԵՊԻ ՄԷՋ 80 ՆՈՐԱԳԻՐՆԵՐ ԱՆԴԱՄԱԳՐՈՒԵՑԱՆ ՍՈՒՐԻԱՐԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉԻՆ

ՍՕ Խաչի Կազմակերպական կառույցը ամուր հիմքեր վրայ դնելու և ազգային ու վարչական գիտելիքներով օժտուած միութենականներ պատրաստելու հրամայականն մեկնած, ՍՕ Խաչի Շրջանային Վարչությունը Չորեքշաբթի, 18 և Հինգշաբթի, 19 Ապրիլ 2018-ին

Ազգային դաստիարակության դպրոցի մը դերը կատարելու կոչուած ՍՕ Խաչը կը ձգտի նոր սերուն-

ջութիւնները իրենց մեծաթիւ նորագիր անդամուհիներով, երիտասարդ ուժերով, որոնք եկած էին թրծուելու և մշակուելու ՍՕ Խաչի աշխատանքի դաշտին մէջ:

ՍՕ Խաչի քայլերգէն վերջ, Շրջ.

տանքի զօրութեան, սերտուած ու նպատակադրուած ծրագիրներու իրագործման, կամուրջի դեր ստանձնելով և փոխադարձ ծանօթացման ուղիներ հաստատելով ժողովուրդի տարբեր հատուածներուն միջեւ՝ ի խնդիր նոր սերունդի դաստիարակութեան:

Երկօրեայ դասընթացքները իրենց մէջ կը պարփակէին ՍՕ Խաչի կազմակերպական կառույցը,



կազմակերպեց նորագիր անդամուհիներու դասընթացք, անոնց փոխանցելու համար ՍՕ Խաչի կազ-

դին մէջ ամրացնելու ինքնութեան գիտակցութիւնն ու հպարտութիւնը և ընդհանուր մտահոգութիւններէ



Վարչութեան ատենապետուհի Հռիփ Կանանեան որոշուեց ներկաները և իր գնահատանքը յայտնեց երիտասարդ նորագիրներուն: Ան

վարչական գիտելիքներ, դիւանային պարտականութիւններ, ժողովավարական և կարգապահական օրէնքներ, նպատակ ունենալով ընդհանուր հայեցակարգի և ծրագիրներու մշակում, դասակարգում, անոնց գործադրութեան դաշտի յստակացում և քառոզական միջոցներու համադրում:

Դասընթացքի իւրաքանչիւր նիւթին անդրադարձան ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան ընկերուհիները, իսկ ՅՕՄ-ի և ՍՕ Խաչի պատմականներուն՝ ՅՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ Աննա Տէր Յակոբեան:

Երկօրեայ դասընթացքի աւարտին երդման արարողութեան կնքամայրութեան պատիւը տրուեցաւ Աննա Տէր Յակոբեանին, որ թելադրեց իւրաքանչիւրին իր բնագաւառէն ներս նպաստել ՍՕ Խաչին, բա-



մակերպական աշխատանքները, ծրագիրները, և վերանորոգ շունչ և բովանդակութիւն տալու ՍՕ Խաչի

մեկնած գանոնք կապելու մեր ազգային կեանքին, վառ պահելով անոնց մէջ հայրենասիրութեան ոգին, մեր

Թելադրեց մտածել իրենց պարտականութիւններուն և պարտաւորութիւններուն մասին, անդրադառնալ անոնց մեծութեան և իրենք գիրենք տեղադրել գոհութիւններու գունային մէջ, ըմբռնել նուիրական աշխատանքի պատճառած հոգեկան ուրախութիւնը և բաւարարութիւնը: Կանանեան մատնանշեց, թէ խաչուհին, որպէս կին և որպէս մայր հարկ է որ օգնութեան հասնի մարդկային կեանքին դիմագրաւած դժուարութիւններուն, որոնք ակխուսափելիօրէն առկայ են ամէն օր ու ամէն ժամ: Խաչուհիները, միայն հոգեկան գոհունակութեան համար չէ որ կը գործեն, այլ գիտակցելով կը ծառայեն մեր ժողովուրդին՝ հաւատալով հաւաքական ու կազմակերպուած աշխա-



րոյական թէ նիւթական կարողականութիւնը ի սպաս դնել մարդասիրական ծառայութիւններուն, ըլլան անոնք ընկերային, առողջապահական, կրթական, դաստիարակչական, հայ մշակոյթի պահպանման և այլ մարգերէն ներս:

ՍՕ Խաչի Շրջանային Վարչութեան
Թղթակից
Շար.՝ 12 14



կազմակերպչական մեքենային՝ տրուած ըլլալով, որ ՍՕ Խաչը հաւաքական սիրոյ և բարեգործութեան միութիւն է, ունի իր կանոնա-

աւանդութիւններու նկատմամբ յարգանքը, բարեգործութիւնը և մտաւոր կազմաւորումը: Երկու օրերու վրայ երկարող



գիրը, որուն մէջ ներառուած են նպատակը, գործունէութիւնը, կառույցը և ժողովավարական օրէնքները:

դասընթացքներուն մասնակցութիւն բերին նստավայրի «Անի», «Սեւան» և «Նայիրի» մասնաճիւղերու վար-

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կը խնդրուի Տիգրանակերտի Հայրենակցական Միութեան «Տիգրանակերտ» և «Շուշի» շէնքերու վարձուորներէն, որոնք ցարդ չեն փակած իրենց 2017-ի յետնեալ վարձքերը փութան վճարելու գանոնք մինչեւ՝ 30-6-2018-ը այլապէս միութիւնս պիտի դիմէ պետական միջոցներու գանձելու համար վերոյիշեալ վարձքերը:

Այլ տեղեկութիւններու համար հեռաձայնել. - 2110088 - բջիշային 0944 250808:

Տիգրանակերտի Հայրենակցական Միութեան Վարչութիւն

ԴՈՒՐԱՅԷ ԵՒ ՎԵՐԱԾԾՈՒՄ ԳԵՐԵՋՄԱՆԱՏԱՆ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՏՐԱՆ

«Ով Տեր սիրեցի քու տանդ բնակությունը եւ քու փառքիդ կեցած տեղը» (Մկ 25.8)

Հանդիսապետությամբ Արհ. Տ. Պետրոս Արք. Միրիաթեանի, Առաջնորդ Բերիոյ Թեմի Կաթողիկէ



Հայոց, Երեքշաբթի, 24 Ապրիլ 2018, առաւօտեան ժամը 10:00-ին, տեղի ունեցաւ դռնբացեցի եւ վերածման



արարողութիւն Հայ Կաթողիկէ Գերեզմանատան Ս. Յարութիւն Մատրան, որ ծանօթըն վնասուած էր գերեզմանատան հետ միասին, Սուրիական քանդիչ պատերազմին հետեւանքով:

Գերապայծառ Տէրը գգեստւորուած՝ վարդապետներու, դպիրներու, երգչախումբին եւ հաւատացեալներու ներկայութեան, «բաց մեզ, Տէր դուռն ողորմութեան» շարականի երգեցողութեամբ, սաղմոսներու



եւ Ս. գրային հատուածներու ընթերցումով մուտք գործեց մատուռ եւ «Առաքելոյ Աղաւտոյ» շարականի երգեցողութեամբ, յառաջանալով դէպի խորան, Ս. Միւռնով կատա-

րեց վերածումը Ս. սեղանին:

Ապա դպիրներով կազմուած թափօրին ընկերակցութեամբ, «Լուսաւորեա, Լուսաւորեա Երուսաղէմ» շարականի երգեցողութեամբ, Գերապայծառ Տէրը ուղղուեցաւ դէպի



գերեզմանատան շրջափակը կանգնած Ս. խորան, ուր տեղի ունեցաւ հայրապետական հանդիսաւոր Ս. Պատարագ առընթերակայութեամբ Զ. Հայկ Վրդ. Մակարեանի եւ Զ. Կոմիտաս Բնկ. Տատաղեանի: Երգե-




ցողութեամբ իր բաժինը բերաւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ «Ալեմ-



շախ» երգչախումբը:

Ս. Աւետարանի ընթերցումէն ետք, Արհիապատիւ Գերապայծառ Տէրը տուաւ յաւուր պատշաճի քարոզ մը: Ան նախ գոհութիւն եւ փառք տուաւ Ամենակալին, որ այսօր արժանի դարձուց մեզ, որպէս հաւատքի բերդ այս մատուռը վերածելու յետ վերաշինութեան եւ վերանորոգման, որպէսզի կարողանանք աղօթքներ բարձրացնել առ Աստուած մեր ննջեցեալներուն հոգիներուն փրկութեան համար: Զարոգի աւարտին, ան գնահատական խօսք ուղղեց Տ. Կոմիտաս Բնկ. Տատաղեանի, գերեզմանատան յանձնախումբին եւ բոլոր անոնց, որոնք իրենց աջակցութիւնը բերին վերաշինութեան եւ վերանորոգման աշխատանքներուն:

Պատարագի աւարտին, Արհի. Գերապայծառ Տէրը շքեղ թափօրով մը, կազմուած ԶԿ Միութեան շէփորախումբէն, երգչախումբէն, դպիրներէ, վարդապետներէ, ուղղ-
Տ. Կոմիտաս Բնկ. Տատաղեան
Շար. էջ 11 ➤



Հայ մնալու եւ հայօրէն ապրելու մեր գոյութեան պայքարի ծնունդն է ՀՄԸՄ-ը: Միութեան սկաւառներն ու մարզիկները մինչեւ օրս Հայոց Յեղապանութեան 1,5 միլիոն նահատակներուն արեան կանչին անսալով 24 Ապրիլին կը յիշեն եւ կը պահանջեն մեր ժողովուրդին արդար իրաւունքները:

Սուրիոյ շրջանի ՀՄԸՄ-ականները, Տէր Զօրի անապատէն անցած գաղթականներու թռռները ըլլալով, ամէն տարի 24 Ապրիլին Տէր Զօր ուխտագր-նացութեան երթալով կը վերանորոգեն իրենց ուխտը, պահանջատէր ժա-նանգորդը մնալով Արեւմտահայաստանի պապականական մեր հողերուն:

Ահաւասիկ ուխտագր-նացութեան օր մը Մարկատէ գացող ՀՄԸՄ-ականներու կեանքէն, որուն ընդմէջէն կը տեսնենք ՀՄԸՄ-ական պատասխանատուներուն սերմանած հայրենասիրական ոգին:

1946-ին, ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը արշաւ մը կը կազմակերպէր դէպի Գամիշլի՝ խանդավառելու համար ճեղքի հայ գիւղերու բնակչութիւնը: 400 մարզիկներ եւ սկաւառներ, Լեւոն Պապուզեանի խմբապետութեամբ, Շաբաթ գիշեր, օթոպիւսերով ճամբայ կ'ելլէին Հալէպէն: Առաւօտուն կը հասնին Տէր Զօր: Եղեռնի յիշատակին կառուցուած մատրան մէջ աղօթելէ ետք, կ'ուղղուին դէպի Գամիշլի եւ ահա անօթութեան ու ծարաւի պատճառով դժգոհութիւնները կը բարձրանան: Խմբապետը տեղի չի տար: 5 ժամ ճամբայ կտրելէ ետք, անապատի ամայութեան մէջ կը նշմարեն, որ զիրենք կանխող օթոպիւսը խանգարուած է: Դժգոհութիւնները կը կրկնապատկուին: Շատեր կէս ճամբէն ետ դառնալու արտայայտութիւններ կ'ունենան: Խմբապետը, որ մինչ այդ լուռ ու մուսկ կը հետեւէր բոլոր անցուդարձերուն, ստիզ դառնալով՝ բարկացած կ'ըսէ.



«Անթ թ ձեզի, մտքը ձեզի տրուած դաստիարակութեան: Դուք գիտէք, թէ ուր կը գտնուիք: Այս վայրը հայ ժողովուրդի սպանդանոցն է: Հոս էր որ ձեր հայրերը եւ մայրերը ջարդուեցան կացիներով եւ տուհներով: Այս վայրին անունն է Մարկատէ: Անոնք իրենց պապականական տուներէն մինչեւ հոս քալելով եկած են, առանց տրտուելիքի, շաբաթներ տեւող չարչարանքէ եւ անօթութենէ ետք: Դուք ոչ իսկ մէկ օր դիմացաք: Մենք պարզապէս ուզեցինք փորձել ձեր հայրենասիրական ոգին եւ տոկալու կարողութիւնը: Եւ փորձը ցոյց տուաւ, որ դուք արժանի չէք հայ կոչուելու: Ես որոշած եմ միևնաչաք շարունակել. ով որ կ'ուզէ թող միանայ ինձի: Օթոպիւսը խանգարուած չէ. պարզապէս այդպէս ձեւացուցիք՝ շօշափելու համար ձեր հազդեցողութիւնը»:

Խմբապետին այս խօսքերը շանթահարիչ ազդեցութիւն կ'ունենան: Բոլորը ցնցուած՝ կը զգան հարուածին ծանրութիւնը եւ անզգալաբար բոլորը քով-քովի գալով ծունկի կու գան կէսօրուան այրող աւազներուն վրայ եւ խոնաւ աչքերով միաբերան կ'երգեն իրաշալի «Տէր Ողորմեայ»: Խմբապետը մինչ այդ չկարենալով զսպել իր գգացումները, յամրաքայլ կը բարձրանայ օթոպիւս եւ հոնքուռ-հոնքուռ կու լայ: Ուխտը կատարուած էր:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
Էլէճեան, Նիկողոսեան, Մանճիկեան, Աճեմեան եւ Գարապաշեան ընտանիքները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝
ՀԱՆԳՈՒՅԵԱԼ
ՀԱՄԵՍՏՈՒՀԻ ԷԼԷՅՃԵԱՆԻ
(Ծննայ՝ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ)
մահուան սուգին:
Հանգուցեալի քառասունցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 6 Մայիս 2018-ին, յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագի, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ -Հալէպ:
Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին հանգուցեալի դուստրին դուկտ. Չեփիւռ Աճեմեանի բնակարանէն ներս:

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ «ԿԱՐԳ ԲԱՐԵԽՕՍԱԿԱՆ ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑՆ»

Հայոց Ցեղասպանության Ապրիլեան ոգեկոչումներու ընթացքին յատուկ բաժին կը վերապահուի սըրբադասուած Նահատակներուն, որոնք արեան վկայութեամբ քրիստոնէական հաւատքին եւ հայրենիքին:



տոնեական հաւատքին եւ հայրենիքին նկատմամբ անքակտելի կապուածութիւն եւ հաւատարմութիւն ցուցաբերեցին:

Արդարեւ, Երեքշաբթի, 24 Ապրիլ



րիլ 2018-ին, առաւօտեան ժամը 9:30-ին, Ազգ. Գերեզմանատան մէջ բացօթեայ Ս. եւ Անմահ պատարագ մատուցուեցաւ եւ «Կարգ Բարեխօսական Սրբոց Նահատակացն» արարողակարգը տեղի ունեցաւ:

Արարողութեան կը նախագահէր Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Շահան Սրբ. Արք. Սարգիսեանը: Ներկայ էին Բախտարի Ռատարագի եւ Սրբ. Ս. Մաշտոց Ա. Զին. Արապաբեկեան, երգեցողութիւնը կատարեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ դպրոց դասը, ղեկավարութեամբ՝ Բժ. Սարգիս Իսկենեանի:

Շարժական խորանը տեղադրուած էր մատրան շրջափակը, աստիճաններուն կողմը: Միայն Ապրիլ 24-ի առիթով նմանօրինակ կարգադրութիւն մը տեղի կ'ունենայ, որպէսզի անելի լայն տարողութեամբ հաւատացեալներ մասնակից դառնան օրուան խորհուրդին եւ վերաորոգէն իրենց ուխտը հանդէպ Աստուծոյ եւ հայրենիքին:

տուծոյ եւ հայրենիքին:

Երկիւղած պաշտամունքի մը ընդունումը զգալիօրէն կը մղէր արօթքի եւ գոհաբանութեան: Անշիւրիմ մնացած բիրաւոր Նահատակներուն խոր յարգանք ընծայելը ամբողջական պատկեր կը ստանար Ս. Պատարագով: Հաւատքի թթիւմորով շողախուած Ներկաներ մէկ էին Զրիստոսով եւ հայրենիքով, հայտորուի ապրումով եւ Ապրիլեան խորհուրդով:

Յընթաց Ս. Պատարագին տեղի ունեցաւ «Կարգ Բարեխօսական Սրբոց Նահատակացն» արարողակարգը, գլխաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ մասնակցութեամբ Բախտարայ հայրերուն: «Հրաշագան Պատկանմամբ» հոգեպարար շարականը վայելուց եւ խորհրդաւոր ձեւով կը նկարագրէր մեր Նահատակներուն արդար պահանջը, որպէսզի Տէր Աստուած դատէ յանցապարտը վերջնականապէս: Կարողացուեցաւ սուրբ գրային հատուած, ապա Աւետարանէն բաժին մը, յետոյ «գոչեմբ առ քեզ» ընդունեցաւ, որմէ ետք «Զրիստոս Աստուծոյ եւ հայրենիքին» մարդանքը եւ աւարտին՝ «Պատկիչ Սրբոց» արօթքը արտասանուեցաւ:

Առաջնորդ Սրբազան Հայրը փոխանցեց իր պատգամը, բնաբան առնելով Պօղոս առաքեալին հետեւեալ այժմեական խօսքերը. «Վերանորոգուեցէ՛ք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով, եղէք սոր մարդ մը՝ Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած, եւ ապրեցէք ճշմարիտ կեանքը՝ արդարութեամբ ու սրբութեամբ» (Եփ 4.23-24):

Սրբազան Հայրը դիտել տուաւ առաքելական խրատական խօսքին կարեւոր տեղն ու դերը հաւատացեալին կեանքին մէջ: Ապա շեշտեց վերանորոգ թափով ապրելուն եւ ինքնամոխի վիճակէն դուրս գալուն անյետաձգելի ըլլալը, առանց որուն հայր կը մնայ անհաղորդ իր շրջապատին հետ, ենթարկուելով կորուստաբեր մտայնութիւններու:

Սրբազան Հայրը ըսաւ. «Մենք մշտապէս մեր մէջ «Նոր Մարդ» խորեն Զին. Պրոթիզեան Շաբ.՝ էջ 14»

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ԱՍՄՈՒՆԵՐԻ ՅՈՒՇԵՐՍ



Սեւանա Հայլաճեան

Ասմունքի մրցոյթի առաջին աշակերտին հետ վերապրեցայ 12-ամեայ ասմունքի մրցումի մասնակցող Սեւանային հոգեվիճակը: Անլապատրաստած ըլլալով մէկտեղ, վախ ունէր, որովհետեւ մնացեալ աշակերտներէն անելի մեծ բեռ մը ունէր ուներուն: Բեռ ու առաւելութիւն միեւնոյն ժամանակ: Այդ բեռը Ազգ. Հայկազեան վարժարանի աղջկանց բաժինը ներկայացնելն էր

Իսկ այսօր՝ Նոյն մրցումին ներկայ եմ ոչ թէ լոկ որպէս ասմունքով կամ հայերէնով հետաքրքրուող աշակերտ, այլ իբրեւ կազմակերպող կողմ, իբրեւ Ուսումնական Խորհուրդի անդամ: Մարմին մը, որ աշակերտական տարիներուս յարգանք կը պարտադրէր քրոյրս, սփիւռքեան անողորմ պայմաններուն մէջ իր ստանձնած մեծ պատասխանատուութեան եւ տարած աշխատանք-



ու լաւ ասմունքով, յաղթանակ շահելով, ծնողքին, ուսուցիչներուն ու դպրոցին հպարտութիւն ներշնչելը:

Թող ոչ ոք անկեղծութեան համար նեղանայ, բայց կը յիշեմ, այդ օրերուն, Ազգ. Հայկազեան վարժարանի աղջկանց բաժինը կը գերազանցէր մնացեալ հայկական վարժարանները հայերէնի իր յատուկ դասաւանդութեամբ ու հոգատար ուսուցմամբ: Օրդ. Ֆիմի Տ.Յակոբեանի եւ օրդ. Էմմա Ազարիկեանի

ներուն բերումով: Մեզի համար իտեալներ էին այս մարմինի մաս կազմող անդամները, թէւ չէինք ճանչնար զիրենք անձնապէս, սակայն, անոնց ամբարձր ներկայութիւնը, քաջալերանքը, տազնապիլը տեսնելով, որոշ պատասխանատուութիւն մըն ալ մենք կը զգայինք:

Անցեալի սերմերը այսօր սերմնացան դարձած են արդէն ու մեծ պատասխանատուութիւն ունին, որովհետեւ սերունդը փոխուած է,



աշակերտուիին ըլլալու բախտաւորութիւնը չեմ ունեցած, սակայն վայելած եմ օրդ. Գոհար Արուշեանի դասաւանդութիւնը: Ան զիս քաջալերելով կ'ըսէր. «Սեւանա՛, առողջանալու յատուկ է, բառերը հաստիկ-հաստիկ, յստակ կը հնչես, զգացումներուդ արտայայտութիւնն ալ ազդեցիկ է, բայց շեշտերուդ եւ ձայնի ելեւէջներուդ վրայ աշխատելով պետք է կատարելագործես ասմունքելու ունակութիւնդ ու վստահ եմ, որ յաջող ասմունքող մը պիտի ըլլաս: Զեզ նկատի առած եմ միջկարծարանային ասմունքի մրցոյթներու մասնակցութեան համար: Գիտեմ, լաւ պիտի ներկայացնես դպրոցդ: Կը վստահիմ քեզի»:

Այսօր դերս փոխուած է: Տարիներ առաջ մրցակից աշակերտուի էի, երազներ ու ձգտումներ փայփայող փոքրիկ մը, որ ամենակալին շնորհած տաղանդը ծնողքին ու ուսուցիչներուն քաջալերանքով գարգացնելու ուղին բռնելով գանազան մրցումներու պիտի մասնակցէր:

դաստիարակութեան միջոցները փոխուած են ու դարուս արագընթաց գարգացումներուն հետ քայլ պահելու հրամայականէն թելադրուած, նորարարութեան հետ քայլ պահելով պետք է գործեն անոնք: Ուստի, հիմա կ'ըմբռնեմ, որ միջկարծարանային ձեռնարկներուն նպատակը, շատ անելի հեռու է սովորական աշխատանք մը կազմակերպելէ, հայերէնաւանդ ուսուցիչներու ու դպրոցներու յարաբերութիւնները գարգացնելէ ու տաղանդաւոր արտիստներ յայտնաբերելէ: Վերոյիշեալները քայլեր են հասնելու հիմնական նպատակին՝ մայրենիին, մեր գրականութեան, պատմութեան ու մշակոյթին փարելու, խորանալու անոր գօրացնող, կրթող ու մշակող ծալքերուն մէջ եւ այդ հարստութեամբ իսկ հարստանալու հոգեպէս, հայանալու եւ անելի դիմացկուն դառնալու փոթորիկներուն դիմաց: Աւելին. այդ փոթորիկներն իսկ մեր հօրացման ծառայեցնելու:

Շաբ.՝ էջ 14»

Աշակերտական Անկիւն

ՄԵՐ ԴՊՐՈՅԸ



Քրիստ Թրթեան

Մեր սիրելի դպրոցը՝ Ազգ. Ուսում. Միացեալ Ճեմարանը, գեղեցիկ եւ հոյակապ երկու շէնք է: Նախակրթարանի շէնքը կը բաղկանայ տասնհինգ դասարաններէ: Իմ դասարանս կը գտնուի երկրորդ յարկին աջ կողմի հինգերորդ սենեակը:



Մենք քսան աշակերտ - աշակերտուհի ենք: Մեր օրը կ'անցընենք ուրախութեամբ դաս սորվելով, երբեմն ալ ուսուցիչները նեղացնելով եւ բարկութիւն ստանալով անոցմէ:

Իմ սիրած դասանիւթս հայերէնն է, որովհետեւ հայերէնը մեր մայրենի լեզուն է, եւ ան թանկագին է մեզի համար:

Ես ինը տարի է ի վեր կը յաճախեմ այս դպրոցը: Այս տարիներուն շատ գիտելիքներ սորվեցայ ինչ:

Մենք՝ իւրաքանչիւրս պետք է աշխատասեր եւ կարգապահ ըլլանք, որ բարձր պահենք մեր սիրելի դպրոցին անունը:

2. Կարգ Զեասպի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ճեմարան



ՍՊԱՍՈՒՄ



Մարի Պերպերեան

Հրթիռներու սոսկալի ձայներ, գէլքերու ահաւոր շաչիւն, այս բոլորին մէջ կը քալէի, երբ տեսայ մարդ մը, որ արիւնաթաթախ հագուստներով, սարսափած կը վազէր. ուզեցի օգնել իրեն, բայց խեղճը վախէն չէր կրնար բացատրել, թէ ինչ պատահած էր:

Ես ենթադրեցի որ հրթիռի մը պայթումէն սարսափելի բան մը պատահած էր: Ենթադրութիւնս ճիշդ էր. մարդուն փոքրիկ աղջիկը զոհուած էր:

Այս անմեղ մանուկին պէս շատեր զոհ գացին այս դաժան պատերազմին:

Եւ ամէն օր նոր բօթ մը կը լըսեինք, ամէն օր անմեղ ժողովուրդը զոհ կու տար: Օր մը, երբ կացութիւնը շատ գէշ էր ու մարդիկ իրենց տուններուն մէջ բանտարկուած անձրեւի պէս տեղացող հրթիռներէն պաշտպանուիլ կը փորձէին, հեռաձայնին զանգը հնչեց, հազիւ լսեցի ու մօտեցայ ընկալուչին:

- Մարի, հօրեղբայրդ առեւանգուեցաւ...: Ուզեցի լալ, պորթօկալ այս տխուր իրականութեան դէմ, բայց ի՞նչ օգուտ... քարացած մնացի:

Տարիներ անցան ու այս մեծ ցաւը մնաց մեր սրտերուն մէջ, բայց երբեք չյուսահատեցանք:

Յոյսով ենք, որ օր մը դարձեալ պիտի միանանք: Այո՛, պիտի միանանք ու վայելենք հօրեղբորս հաճելի ներկայութիւնը մեր ընտանիքէն ներս, դարձեալ պիտի լսենք իր առնական ձայնը, պիտի համբուրենք կարմրուկ այտերը:

Մի՛ ուշանար, իմ հերոս հօրեղբայր: Կը սպասենք քեզ:

Թ. Կարգ Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարան

ԿԸ ՅԱՐԳԵՄ ԱՆՁԵՐԸ... ԿԸ ՄՏԱՅՈՒԳԵՆ ՀԱՐՅԵՐԸ




Պարգեւ Աւագեան

Ո՛ր, ինչո՛ւ, ինչպե՛ս... հարցականներ, որոնք կը սպասեն համոզիչ պատասխաններու:

Անձերէն անդին ու հանգամանքներու ետին, կ'ուզեմ մատնանշել կարգ մը երեւոյթներ, որոնք ոմանց համար կը նկատուին յետին:

Մանրամասնութիւնները ձգելով մասնագետին, կ'ընդգծեմ երեւոյթներ լայն ու տարածուն, հին ու նորածին:

Գլխագիր, խորագիր, նկարագիր: Ըստ բառարաններու, նկարագիր կը նշանակէ բնաւորութիւն, բարք, կերպար, դրոշմ: Փորձեցի հասկընալ բառին խոր իմաստը, որուն համար դիմեցի Գրիգոր Խոր Վիրապցիին, Գրիգոր Չոհրապիւն, որ մարդու նկարագիրը լաւագոյնս արտայայտած էր իր «Ճիտին պարտք»ով: Տեսայ, թէ ինչպե՛ս հորեւնացին, Նարեկացին իրենց կայուն նկարագրին համար մնացին կարօտ հացին: Պատմութեան դիմեցի, անոր էջերը մէկիկ-մէկիկ թերթատեցի, չկրցայ զանազանել ցորենն ու քարին: Ծունկ ծեծեցի, գլուխս զարկի քարին ու ժայռին:



Արդեօք բացատրել պե՛տք է ժողովուրդին յանցանքը սխալողին, թէ ոչ ծայրն է պետք ցոյց տալ գաւազանին՝ հեռանալով աւագ անէն նկարագրին:

Ճիշդը գիտնալ... բայց կառնած մնալ սխալին:

Ճերմակը ճանչնալ ու պնդել սելը որպէս սպիտակին:

Խորքը թափանցել, բայց փարած մնալ կեղեւին:

Ահա ինչ է գերեզմանը նկարագրին, ո՞վ ըսած է, որ ամէն մարդ ամէն ինչ գիտնալու ու գիտցածը ամէն տեղ արտասանելու իրաւունք ունի:

Որպէս խօսքի ազատութիւն բեմ կը բարձրացնենք թատրոն ու կը յոխորտանք, թէ կը մատնանշենք ճշմարտութիւն, ետին թաքնուած կը տեսնենք, սակայն, մաղձ, անհանդուրժողութիւն ու գրպարտութիւն:

Միասնակամութիւնը կը վերածենք լոգոսքի, ազգային գիտակցութիւնը՝ աժան յորդորի, իսկ հայրենասիրութիւնը՝ մեզ պառակտող ոլորապտոյտի:

Նկարագրի կայուն, իսկ սկզբ-

բունքի լիարժէք թարգմանութիւնը կարելի է գտնել միայն նահատակներուն ու մարտիրոսներուն մօտ. անոնց մօտ այս բոլորը անցած են խօսքի սահմանը ու վերածուած են գործի: Անոնք զոհաբերած են իրենց առաւելագոյնը՝ արժանիին:

Զափի զգացումին այս բացակայութիւնը եւ չափազանցութեան

ամկայութիւնը ամէն բանի մէջ, ակներեւ կը դարձնեն իւրաքանչիւր անհատի հոգիին ամենախոր ծայրերը:

Կան բազմաթիւ ճշմարտութիւններ, որոնց անտեսումը կրնայ վատ եւ ցաւոտ կացութիւն ստեղծել ոմանց համար:

Անթիւ փոխազդեցութիւնները, ներշնչումները եւ ինքնաներշնչումները կը կազմեն մարդու նկարագիրը:

Պատմութեան սիրոյն, գէթ մէկ անգամ ուրեմն, փաստենք գալիք սերունդներուն, որ մենք մէկ ենք՝ առնուազն երբ կը լսենք ձայնը ահագանգին:

Ու ես կը լսեմ ոտնաձայնը ահագանգին...

Սակայն Ասուպի Նման կը փայլատակէ գաղափար մը ոսկի ու ձայն առնելով կը գոռայ.

-Դո՛ւն, որ ինքզինքդ կը համարես խելացի, չէ որ փնտռածդ արդէն դարձած է լոկ պատռակ բառարանի...

Ու ես երկա՛ր խնդացի...

Radio Yeraz logo and website address: www.radioyeraz.com

ԼԱԹՎԻԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԻՐ ՅԱՐԿԱՆՔԻ ՏՈՒՐԷԸ ՄԱՏՈՒՑԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՍՐԲԱԴԱՍՈՒԱԾ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Ս. Արք. Սարգիսեանի, կազմակերպությամբ Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Թաղական Խորհուրդին, Երեքշաբթի, 24 Ապրիլ 2018-ին, Ազգ. Ս. Նահատա-



կաց վրժ. -ի «Արարատ» սրահէն ներս տեղի ունեցաւ Հայոց Տեղասպանութեան 103-ամեակին նուիրուած ոգեկոչական հանդիսութիւն, ներկայությամբ Արժ. Տ. Եզնիկ Զիւլ. Չղջանեանի, ազգային մարմիններու, միութիւններու ներկայացուցիչներուն ու հոծ բազմութեան:



Հանդիսութիւնը սկսաւ Սուրիոյ եւ Հայաստանի Հանրապետութեան զոյգ քայլերգներով, ապա ներկաները յոտնկայս լուծութեամբ յարգեցին Հայոց Տեղասպանութեան մէկ ու կէս միլիոն սրբադասուած Նահատակներուն յիշատակը:



Օրուան հանդիսավար Ռիթա Կաղեան Տիգրայիբեան իր արտասանած բացման խօսքով դիտել տուաւ, որ. «Սովորաբար Ապրիլը կ'աւարտէ բնութեան գարթնը: Գարունը իր հետ կը բերէ խիւղ ու ծիծաղ, անսահման բարութիւն ու



երանութիւն: Սակայն, 1915 այդ աղիտալի տարին, գարունը մահ սփռեց մեր չքնաղ երկրին վրայ: Այսպէս, հայ ժողովուրդին բեկորները

պատմութեան ընթացքին սկսած ձգած են իրենց տունը եւ գաղթականի ցուպը ձեռքին, ինչպէս են երկրէ երկիր եւ շինած իրենց բոյնը, ստեղծած մեծ կամ փոքր գաղթօճախներ: Սակայն հայրութեան ամենամեծ եւ ողբերգական գաղթը տե-



ղի ունեցաւ 1915-ի Ապրիլ ամսուն, երբ վայրագօրէն տիրացան մեր հողերուն, մեր սեփականութեան եւ ողջ ժողովուրդ մը քշուեցաւ դէպի անա-



պատ, դէպի ստոյգ մահ: Ոմանք միայն բախտ ունեցան դահլիճի սուրբէն ազատելու: Անոնք ցորուեցան աշխարհի տարածքին եւ ստեղծեցին հայկական Սփիւռք»:



Այնուհետեւ հանդիսավարուիին յաջորդաբար բեմ հրաւիրեց յայտագիրին մասնակիցները, օրուան խորհուրդը ներկայացնող բանաստեղծական քառեակներ եւ պատգամներ մէջբե-



րելով: Օրուան բացման պատկերը ներկայացուցին Սուրիոյ Երիտասարդական եւ Պատանեկան միութիւններու անդամները, բաղկացած երեք բա-
Յերմիկ Տողրամանեան-Գաբրիէլեան
Շար. Էջ 14 ➤

ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՀԱԼԵՊԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Չորեքշաբթի, 18 Ապրիլ 2018-ին, Մեծն Բրիտանիոյ բարձրաստիճան պատուիրակութիւն մը, գլխավորութեամբ՝ Պարոնէս Գարըլայն Քըքսի, պաշտօնական այցելութիւն կատարեց Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վեր. Յարութիւն Սելիմեանին:

Սոյն պատուիրակութեան մաս կը կազմէին Բրիտանիոյ Լորտերու Պալատի անդամներ, եկեղեցականներ եւ ակադեմիկոսներ:

Այցելութեան ընթացքին Հայ Աւետարանական Բեթլէ Երկրորդական Վարժարանի աշակերտութիւնը, յանուն Սուրիոյ Հայ Աւետարանական համայնքի հաստատութիւններուն, պաշտօնական գիր փոխանցեց Բրիտանիոյ պատուիրակութեան, որուն մէջ կը պահանջէ Հայոց Տեղասպանութեան ճանաչումը Բրիտանիոյ կառավարութեան կողմէ, կը յայտնէ իր յանձնառութիւնը Սուրիական հայրենիքին, ինչպէս նաեւ կը դատա-



պարտէ Սուրիոյ վրայ Բրիտանիոյ կառավարութեան կողմէ կատարուած հրթիռարձակումիւն արարքը:

Պատուիրակութիւնը գնահատանքով ստանձնեց պաշտօնական գիրը, այն յանձնառութեամբ, թէ զայն պիտի փոխանցէ առ որ անկ է:

Ապա պատուիրակութիւնը շրջեցաւ եկեղեցւոյ շրջափակէն ներս գտնուող բարեպարական եւ բժշկական կեդրոնները, Հայ Աւետարանական Բեթլէ եկեղեցւոյ «Արմիս» երաժշտանոցն ու «Բեթլէ» մանկամտուրը: Պատուիրակութիւնը մեծապէս գնահատեց Վեր. Համայնքապետ Յարութիւն Սելիմեանը՝ Սուրիոյ Հայ Համայնքէն ներս, յատկապէս սուրիական պատերազմի անցնող եօթը տարիներու ընթացքին իր նուիրական ու անձնուրաց ծառայութեամբ ձեռք բերած խաղաղութեան միջոցներու որոնման եւ գործունէութեան համար: Պատուիրակութիւնը նաեւ հանդիպում ունեցաւ Հայ Աւետարանական Համայնքի տարբեր հաստատութիւններու ներկայացուցիչներուն հետ: Հանդիպումի ընթացքին քննարկուեցան Սուրիոյ ներկայ իրավիճակը, ինչպէս նաեւ վերակառուցման եւ վերաշինութեան ծրագիրներուն անհրաժեշտութիւնը՝ գալիք տարիներուն համար:

Ապա պատուիրակութիւնը այցելեց Բեթլէ եկեղեցին եւ աղօթքներ մատուցեց Սուրիոյ խաղաղութեան համար, որմէ ետք Վեր. Համայնքապետը պատուիրակութեան հետ միասին քննարկեց Սուրիոյ խաղաղութեան եւ արդարութեան խթանման ուղիները, որպէսզի Եւրոպայի ընդհանրապէս եւ Մեծն Բրիտանիան յատկապէս իրենց կառուցողական ներդրումներով սատար հանդիսանան Սուրիոյ ժողովուրդի բնականոն կեանքի ապահովման:

Հանդիպման ավարտին, Հայոց Տեղասպանութեան 103-րդ ամեակի շրջագիծին մէջ, Վեր. Համայնքապետը, Բրիտանիոյ բարձրաստիճան պատուիրակութեան հետ մեկտեղ, ծաղկեմատոյց կատարեց Բեթլէ եկեղեցիին մէջ գետեղուած Հայոց Տեղասպանութեան յուշակոթողին առջեւ:

Ծաղկեմատոյցէն ետք արտասանուեցաւ խօսք եւ աղօթք:

Հանդիպման ավարտին, Վեր. Համայնքապետը պատուիրակութեան յուշանուէրներ փոխանցեց, իբրեւ երախտագիտութիւն կատարուած այցելութեան:

ՄՏԱՄԱՐԶԱՆՔ



ԽԱԶԲԱՌ (ՄՆ 245)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1				■								
2				■		■		■				■
3		■	■				■			■	■	
4				■		■				■		
5									■			
6		■	■		■							
7							■			■		
8				■	■	■				■		
9												
10			■				■		■	■		
11		■				■		■			■	
12	■											

Հորիզոնական

- 1- Սիամանթոյի ծննդավայրը: Մորթել:
- 2- Հակառակ՝ շարունակ: Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ:
- 3- Հարցական դերանուն: Ոչ հասուն:
- 4- Սուրիահայ գրողներու տարեգիրք: Միայն: 62:
- 5- Հովանոցաձեւ բոյս: Առարկայ: Հակառակ՝ արդի:
- 6- Ամենէն առաջ: Հասկցի՛ր:
- 7- Խառն պղինձ: Զէն: Հակառակ՝ 920:
- 8- Ափսոսանքի ձայն: Հակառակ՝ քաջ: 4020:
- 9- Հայ վրիժառու բազուն, որ 1922 Ապրիլ 17-ին Արշալիր Շիրակեանի հետ Պերլինի մէջ ահաբեկեց ջարդարար Պեհատին Շաքիրին եւ ճեմալ Ազմիլին:
- 10- Հակառակ՝ տարածքի միաւոր: Դաշտ: 2900:
- 11- Արական անուն: Ձայնանիշ մը:
- 12- «Մուսա Լեւոն 40 Օրը» վեպի հեղինակը:

Ուղղահայեաց

- 1- Վարժ գործաւոր:
- 2- Հակառակ՝ աղբիւր: Հակառակ՝ յարաբերական դերանուն: Հակառակ՝ թատերական ներկայացումի դադար:
- 3- Հակառակ՝ իրերայաջորդ տառեր: Հակառակ՝ 7009: Հակառակ՝ հաստատական պատասխան: Տարածքի միաւոր:
- 4- Ջրհեղեղէն ազատած արդար նահապետը: Հակառակ՝ հայ նահապետ:
- 5- Բուրումնաւետ ծուխ արձակող ռետին: Իգական անուն:
- 6- Հակառակ՝ իրերայաջորդ տառեր:
- 7- Հակառակ՝ հանքային համեմ: Իգական անուն: Փոքրացնող մասնիկ: Հարցական դերանուն:
- 8- Անդունդ, վիհ:
- 9- Արժեք: Աւետիս Ահարոնեանի «Ազատութեան ճանապարհին» հատորի պատմութեանը հերթաբար տառեր: Իրերայաջորդ տառեր:
- 10- Շարժուն մեքենայի ուղղութիւն տուող գործիք: Հակառակ՝ առարկայ: Իրերայաջորդ տառեր:
- 11- Էական բայ: «Կռունկ» պանդխտութեան ժողովրդական երգի հեղինակը:
- 12- Բունեն քանդակած:

ՊՆԲԱՅԷ...

Սկիզբ՝ Էջ 8

ուեցաւ դէպի յուշակոթող, ուր տեղի ունեցաւ ծաղկեպսակի գետեղում համայնքիս Յանձնախումբերուն կողմէ եւ ապա կատարուեցաւ

կարգ բարեխօսութեան մեր անմահ նահապետներուն:

Յիշեալ Մատուռը կառուցուած է 1933-ին, Հայր Գաբրիէլ Ծ. Վրդ. Գասպարի եւ իր եղբոր՝ Պետրոսի նուիրատուութեամբ:

Յիշատակն արդարոց Օրհնութեամբ եղիցի:

Պատրաստեց Մարինա Զիւլքըռէան-Պողիկեան

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 245)

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

		8		1		7	5	
	9	4	8			1		
					5			8
	7							5
9				3				2
3							4	
			7					
4		1			8	2	7	
	5	7		4		6		

ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 16)

Միաց Մեծարեցի բանաստեղծութիւնները ջնջելով գտէ՛ք պահուած բառը:

Պահուած բառը 14 տառերէ (երկու բառէ) բաղկացած Մեծարեցի բանաստեղծութիւններէն մէկը կը ներկայացնէ:

կ	ր	ն	ո	բ	տ	ա	բ	ի	ն
ա	ե	ե	ա	ի	բ	վ	ք	հ	ն
ն	հ	ա	ծ	ն	ի	ա	ո	ի	ա
ա	ա	ա	ն	յ	ձ	յ	ւ	ւ	ւ
ն	պ	յ	ա	ք	ա	բ	ն	դ	ա
ո	ի	գ	կ	ն	ի	կ	ե	ը	կ
ւ	գ	ե	ո	ւ	դ	ե	ա	ւ	ն
ն	ա	բ	ն	ձ	ա	ա	բ	յ	ե
ն	բ	գ	բ	ե	ե	ն	բ	գ	բ
մ	ե	բ	ծ	ո	ւ	մ	բ	ձ	ը

«Այգերգ», «Անանուն», «Անձրեւ», «Մերժում», «Վարկեան», «Կեանքի երգը», «Նոր Տարին», «Երագի Պահեր», «Հիւղը», «Նաւակները», «Քուն», «Անդարձ», «Կայծեր», երգ

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԽԱԶԲԱՌ (ՄՆ 244)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	u	a	p	a	h	a	p	■	h	a	m
2	h	e	a	m	l	■	n	q	h	■	e
3	i	n	■	u	q	■	e	p	h	n	o
4	m	j	■	p	a	■	2	n	p	n	■
5	n	p	■	u	q	h	■	u	a	l	■
6	i	■	a	u	■	p	a	n	■	h	n
7	p	a	■	h	■	■	■	■	■	■	■
8	a	h	■	l	■	■	■	■	■	■	■
9	m	h	■	■	■	■	■	■	■	■	■
10	u	a	■	h	■	■	■	■	■	■	■
11	h	■	■	p	l	■	■	■	■	■	■
12	p	h	■	a	h	■	■	■	■	■	■

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 244)

5	3	7	1	4	6	2	9	8
8	2	6	5	7	9	3	1	4
1	4	9	8	2	3	6	5	7
7	9	3	4	1	5	8	2	6
4	6	8	2	9	7	1	3	5
2	1	5	3	6	8	4	7	9
9	7	2	6	8	1	5	4	3
6	5	1	9	3	4	7	8	2
3	8	4	7	5	2	9	6	1

ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 15)

Պահուած բառը՝ «Ամենապիտանի Բանը»:

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Ճակատագիրը ի նպաստ ձեզի կ'աշխատի: Ձեր ճամբան պիտի հարթուի, եւ պայմաններ պիտի ստեղծուին, որ ձեր գործերը կատարելապէս ձեռնարկ կատարէք:



ՑՈՒԼ

Ձեր ժամանակը մի՛ կորսնցնէք, սկսեցէք իրականացնել ձեր նոր ծրագիրը: Մի՛ սպասեք, որ մարդիկ օգնեն ձեզի եւ դիւրացնեն ձեր գործը:



ԵՐԿՈՐԹԵԱԿ

Բախտը առիթ պիտի տայ ձեզի՝ դռներ գարնելու: Ձեր գործունեությունները պիտի բազմանան, եւ պիտի հանգչիք ձեր աշխատանքին մէջ:



ԽԵՅՁԵՏԻՆ

Ձեր ստեղծագործ կարողութիւնները շատ լաւ կ'աշխատին այս ամիս: Այս օրերուն սպասուած ժամադրութիւն մը պիտի ունենանք:



ԱՌԻՅ

Անցեալին պիտի վերադառնաք: Զին տոմարներու մէջ պիտի փնտռէք եւ մեծ դեր պիտի խաղաք՝ միացնելու եւ հաւաքելու այն, ինչ որ տեղի պիտի ունենայ:



ԿՈՅՍ

Կը ջանաք ուրախացնել ձեր սիրելին: Պիտի ապրիք հաճելի յուշեր եւ ապրումներ՝ ձեր սիրտը ուրախացնողին հետ: Լուսարձակները ձեր վրայ պիտի կեդրոնանան:



ԿԵՒՈՔ

Նոր ծրագիրներ պիտի դնէք, որոնց յաջողութիւնը ճամբուն վրայ է: Բարեբախտաբար անցեալէն աւելի համբերող էք եւ կը հետեւիք ձեր հարազատներու խրատներուն:



ԿԱՐԻՃ

Շատեր գ մայլած են ձեր ստեղծագործելու եւ նոր միտքեր յղանակու կարողութեամբ: Այս օրերուն նիւթական հարցեր պիտի քննարկէք:



ԱՂԵՂՍԱՌԸ

Քննարկումներ կատարեցէք, նոյնիսկ եթէ անոնց պատրաստ էք: Աջակցութիւն պիտի գտնէք կարգ մը ընկերութիւններէ՝ որոշ գիշումներով հանդերձ:



ԱՅՑԵՂՋԻՐ

Ձեր տրամադրութիւնը բարձր պիտի մնայ՝ հակառակ որոշ արգելքներու: Փոփոխութիւն մը տեղի պիտի ունենայ ձեր գործին մէջ:




ԶՐՅՈՍ

Ձեր լաւատեսութիւնը պահեցէք, նոյնիսկ եթէ հարցեր ու խնդիրներ ունիք: Չզացական եւ ընտանեկան նոր էջ մը պիտի բացուի ձեր առջեւ: Համբերող եղէք:



ԶՈՒԿ

Պիտի վերադառնաք անցեալին եւ պիտի համեմատէք այն, ինչ որ կը պատահի ներկայիս: Միտքէ հեռու պայմաններ կ'երեւակայէք, բայց պիտի յաղթէք խնդիրներուն:



Սեան Ազարիկեան-Պարմաբզեան

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՆԵՐՊՈՐԹՈՒԹԻՒՆ

Մարդու Վրայ

Հնագոյն ժամանակներէն մարդիկ համոզուած ունեին, որ ձայնային ալիքները իրենց ազդեցութիւնը ունին մարդոց ֆիզիքական եւ հոգեկան վիճակներուն վրայ:

Զին ժամանակներու յոյն հանճարները՝ Պղատոն, Արիստոտել եւ ուրիշներ գիտեին, որ երաժշտութիւնը բուժող յատկութիւն ունի: Անոնք կը հաւատային, որ երաժշտութիւնը կը հաւասարակշռէ ամբողջ տիեզերքը եւ ներդաշնակութիւն կը ստեղծէ:

Զին կտակարանին մէջ յիշուած է. «*Երբ չար ոգին կ'իջնէ Սաւուղի վրայ, Դաւիթ կ'առնէր քնարը եւ կը նուագէր ու կը հանգստացնէր Սաւուղը: Սաւուղը կը հանգստանար եւ չար ոգին անկէ կը հեռանար: Նոյնպէս Եկեղեցուոյ զանգերու դողանքը կը քշէ դիւային ուժերը եւ խորհրդաւոր կապ կը ստեղծէ սըրբազան ուժերու եւ մարդկային հոգիներու միջեւ»:*

Երաժշտութեան ազդեցութեան ուսումնասիրութիւնները

1913-ին Ռուսիոյ մէջ հետազոտութիւնները յանգած են այն եզրակացութեան, որ վախը բացասաբար կ'ազդէ մարդու ուղեղին վրայ եւ կողմնորոշուելու խանգարման պատճառ կ'ըլլայ: Իսկ երաժշտութիւնը դրական յոյգեր փոխանցելով կեդրոնացումը կը զօրացնէ եւ կը բարելաւէ ստեղծագործական կարողութիւնները: Ուրախ երգեր ունկնդրելը կը նպաստէ նաեւ երկարակեցութեան:

*Ուսումնասիրութիւնները փաստած են, որ որոշ մեղեդիներ վերականգնողական ազդեցութիւն կրնան ձգել մարդուն վրայ: Այսպէս, այն հիւանդները, որոնք վիրահատութենէ ետք ունկնդրած են դասական երաժշտութիւն, շատ աւելի արագ ապաքինած են, քան՝ միւսները:

*Միւսիսի մէջ բժիշկներ կ'օգտագործեն երաժշտական բուժումի ձեւը՝ մանկական ուղեղային կաթնածի բուժման համար:

*Ատամաբուժարաններու մէջ օգտագործուած դասական երաժշտութիւնը կը նպաստէ բուժուող անձին ցաւերուն մեղմացման, որովհետեւ ան համազօր է դեղի ազդեցութեան:

*Ուսումնասիրութիւններ փաստած են նաեւ, որ պարբերաբար չափազանց ռիթմիկ երաժշտութիւն լսելը կը բարձրացնէ յոգնածութեան եւ դիւրագրգռութեան մակարդակները:

*Նոտոնի մէջ կատարուած հետազոտութիւններ փաստած են, որ երաժշտութիւնը կրնայ ազդել մեր եւութեան վրայ եւ դրականօրէն՝ ոգեւորելով ու խանդավառելով, եւ բացասականօրէն՝ մեր հոգեվիճակը քայքայելով:

Անգլիացիներ կը հաւատան, որ երաժշտական կրթութիւն ստանալը եւ երաժշտական գործիք նուագելը բարենպաստ ազդեցութիւն կ'ունենան ուղեղին գործունեութեան վրայ: Գործիքի վրայ նուագած ժամանակ մարդուն ձեռքերն ու մատները կը կատարեն բազմաթիւ զգայական շարժումներ, ինչ որ կը բարձրացնէ անոր ուշադրութեան կեդրոնացումը եւ մտային կեդրոնացումը:

Զայ երաժիշտներու կարծիքը երաժշտութեան մասին:

ԺԲ. դարու Նշանաւոր բժիշկ Միսիթար Յերացի կը գրէ երաժշտութեան ազդեցութեան մասին. «*Չուարճացուր հիւանդը խաղերով, ամէն կերպ ուրախութիւն պատճառէ անոր: Թող հնարաւորին չափ լսէ գուսանները, լարերու ձայնը եւ դուրեկան մեղեդիները»:*

Կոմիտաս վարդապետ ինք էս խօսած է երաժշտութեան բուժիչ յատկութեան մասին եւ երաժշտական գործիքներէն՝ քնարը եւ դաշնամուրը համեմատած է հողի, ջուրի, օդի եւ կրակի հետ: Իր կարծիքով, եթէ մարդուն մօտ կը պակսի հողի տարերքի ձայնանիշը (նօթան), պէտք է անոր մէջ սերմանես հողի ձայնանիշ, եթէ կը պակսի ջուրինը, ապա պէտք է սերմանել ջուրինը:

Կոմիտասի երաժշտութիւնը նաեւ ունի կանխորոշիչ ազդեցութիւն: Լսելով յատկապէս «Պատարագ», մենք կրնանք հասկնալ մարդ անհատին հարցերը:



Պէտք է յիշեցնել, որ ճափոնի դպրոցներուն մէջ կը դասաւանդուի Կոմիտասի երաժշտութիւնը, որովհետեւ ան Մոցարդի նման կը համարուի համաշխարհային երաժիշտ:

Երաժշտական գործիքներու ազդեցութիւնը
Երաժշտութեան ազդեցութիւնը կախեալ է ոչ միայն ռիթմէն, այլեւ գործիքէն, որով կը կատարուի երաժշտութիւնը:

Իւրաքանչիւր երաժշտական գործիք ինքնատիպ է եւ իր ազդեցութիւնը ունի մարդու օրկանիւղ մին, ինքնազգացողութեան վրայ:

Այսպէս՝
Լարային գործիքները, ինչպէս՝ կիթառը, ջութակը, քնարը եւ այլն, դրականօրէն կ'ազդեն սըրտանօթային համակարգին վրայ, այս գործիքներուն արձակած ձայները մարդուն մէջ կ'արթնցնեն կարեկցանքի զգացում:

Դաշնամուրը կը ներդաշնակէ մարդու հոգեկան աշխարհը, կը կարգաւորէ միզապարկի եւ երիկամներու աշխատանքը: Ան մեծ ազդեցութիւն ունի մարդու մտային կարողութիւններուն զարգացման վրայ:

Փողային գործիքները իրենց ազդեցութիւնը ունին շնչառութեան խանգարման ընթացքին, կը մաքրեն թոքերը եւ կը լաւացնեն արեան շրջանութիւնը: Այս նուագարանները կայունութեան զգացողութիւն կը յառաջացնեն եւ աշխուժութիւն կը ստեղծեն:

Հարուածային գործիքները դրականօրէն կ'ազդեն մեր մարմնին վրայ: Անոնք կը բարելաւեն սրտին զարկը եւ կ'աշխուժացնեն երակներուն աշխատանքը:

Երաժշտական դարմանում
Բժշկութեան մէջ իր յատուկ տեղը ունի երաժշտական դարմանումը, որ հոգեկան դարմանումի միջոց է՝ երաժշտութեան բուժիչ ներգործութեամբ մարդուն հոգեկան վիճակին վրայ:

Երաժշտական դարմանումը իր երկու ձեւերով՝ ներգործական եւ կրաւորական, կը մեղմացնէ ջղազգրգռութիւնը եւ կը բարձրացնէ մարդուն դիմադրողականութիւնը:



ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱԼԵՊԻ ՄԵՉ...

Սկիզբ՝ էջ 7

եան ատենապետուհին նորագիրներուն թելադրեց այսօր եւ ընդմիջտ որպէս զինուորագրուած խաչուհիներ, իրենց աշխատանքային դաշտը ընդարձակեն թէ՛ ընտանիքէն ներս եւ թէ՛ ազգային կեանքին մէջ, տրուած ըլլալով, որ որպէս կին շքրջանցած ենք տկար սեռին պատկանելու անուանակոչու մը եւ Օգնութեան Խաչի ծառայութեան շնորհիւ ունեցած ենք աշխատանքի տոկոսութիւն, կազմակերպութիւն եւ հաւաքական կեանքի փորձառութիւն: Թելադրեց անոնց հաւատքով ստանձնել իրենց պարտականութիւնները, անադարտ պահել մեր ընտանիքները, հետեւիլ մեր գաւազներու դաստիարակութեան եւ աշակցութեան ձեռք երկարել բոլոր կարիքաւորներուն՝ ի նպաստ մեր ընկերային կեանքի բարօրութեան: Ան մտադրեց, որ մեր երիտասարդ ոյժը նոր աւիշ եւ յաւելելով յոյս ներշնչէ գաղութի հզօրացման ներկայ հրամայականներուն դիմաց:

ՍՕ Խաչի Շրջանային Վարչութիւնը ողջունեց նորագիրները, որոնք յուզախառն մթնոլորտի մէջ իրենց երդումը տուին եւ միացան ՍՕ Խաչի շարքերուն, հաստատելով ընդունուած կարծիքը, որ երիտասարդութիւնը ազգին ապագան է:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 9

Այդ հեռու նպատակներով չհեռանամ ու ակնարկ մը նետեմ այս օրերուն տեղի ունեցած մրցումներուն վրայ:

Առաջինը կազմակերպած էր Բերիոյ Հայոց Թեմի Ուսումնական Խորհուրդը, 21 Ապրիլ 2018-ի առաւօտեան, մասնակցութեամբ հայկական վարժարաններու Ե. Ը. Ե. եւ Ը. կարգերու աշակերտութեան: Ե. Ը. կարգերը հանդես եկան Խաչիկ Տետեանէն «Կարաւաններ Անդարձ Ծանապարհի» պարտադիր կտորով, իսկ Ը. կարգերը «Յանուն Մայիսեան Երթին» դարձեալ Խաչիկ Տետեանի կտորով: Իրենց ընտրութեամբ, ազատ արտասանութեան կողքին: Աշակերտները համոզուած էին որ յաղթական էին, մանաւանդ երբ բոլոր մասնակիցները ստացան նուէր գրքոյկ՝ իբր գնահատանք: Իսկ լաւագոյն ասմունքողները պարգեւատրուեցան գիրքով խորհուրդիս կողմէ եւ անակընկալօրէն յատկացուած յուշանուէրով՝ Տ. Համագասպ Զեյիշեանի կողմէ: Ե. Ը. կարգերու լաւագոյնները հանդիսացան՝ Արինա Պօշկեզէնեան՝ Ազգ. Միացեալ Նիւկրթ., Յարութ Ճենանեան՝ Կրթասիրաց Ս. Չեմպերճեան Երկ. վրձ. եւ Սերիլ Թովմասեան՝ Մխիթարեան վարժարան: Ե. Ը. կարգերու մասնակիցներէն լաւագոյնները համարուեցան՝ Աննա Սաղպազարեան, Արման Տ. Պետրոսեան՝ Զե Ազգ.

Ճեմարան, Մեղեդի Հալէպէան՝ Մխիթարեան վարժարան:

Երկրորդ ասմունքի մրցումը տեղի ունեցաւ նոյն օրուան յետմիջօրէին, երկրորդական կարգի հայկական վարժարաններու աշակերտներուն մասնակցութեամբ, Թեքեան Մշակութային Միութեան կազմակերպութեամբ: Այս միութեան համար սոյն մրցոյթի կազմակերպումը ամենակազմակերպութեամբ է:

Մասնակիցները, իրենց ընտրած ազատ կտորին կողքին, իբրեւ պարտադիր կտոր ասմունքեցին Վ. Թեքեանի «Հայոյն հոգին»: Առաջին հանդիսացաւ Մեղեդի Աւագեան՝ Ազգ. Զարէն Եփփե Ճեմարան, երկրորդ՝ Աննա Մարիա Պարսումեան, Լազար Նաճարեան- Գալուստ Կիւպէնկեան Կեդրոնական վարժարանէն, երրորդ՝ Մեղեդի Հալէպէան, Մխիթարեան վարժարան: Բոլոր մասնակիցները ստացան մասնակցութեան գնահատագիր, իսկ ախոյեանները՝ նուէր: Հարկ է յիշել, որ վերոնշեալ երկու մրցոյթներու դաստակարար կազմերուն մէջ ներառուած էր իւրաքանչիւր մասնակից վարժարանէ հայրենաւանդ ուսուցիչ մը: Ողջունելի են նման ձեռնարկներ, որովհետեւ անոնք հայ աշակերտներուն տաղանդը կը յայտնաբերեն, մրցակցութեան ոգին կը քաջալերեն ու կը մղեն հայ գրականութեան ընթացման՝ անոնց մէջ սերմանելով հայերէնի սերը, որը հայ ուսուցիչներու, դպրոցներու, միութիւններու ու ծնողներու համագործակցութեամբ պիտի ծաղկի՝ երեսն բերելով հասուն ու համեղ պտուղներ:

ԱԹՎ-ԲԻՎՆԱՅՈՒԹԻՒՆԸ...

Սկիզբ՝ էջ 11

Ժիններէ՛ հայ ժողովուրդի տառապանքը (ջարդ, կտորած, արքայ), Յեղասպանութեան 100-ամեակ (Նահատակներու սրբադասում) եւ վերականգնում (պահանջատիրութիւն եւ հատուցում), պատկերը կ'ընդգրկէր նաեւ խմբերգ, պար եւ յուշարձանի տեղադրում:

Ներկաները արցունքոտ աչքերով հետեւեցան բացման պատկերին, ուր շատ հարազատօրէն ներկայացուեցաւ թուրքին բարբարոսութիւնը, հայ ժողովուրդի գաւազներուն իրենց հարազատ օրրանէն տեղահանութիւնը, ապա արքայի երկար ճանապարհը դէպի Սուրիոյ տաք անապատներ, ուրկէ ոմանք բախտ ունեցան փրկուելու եւ հայը կրկին յարութիւն առաւ, կրկին ծաղկեցաւ, ճիշդ այնպէս, ինչպէս անձրեւէն ետք տաք արեւով կը թարմանան ցորենի հասկերը:

Ապա Համագոյնի «Վահան Նաւասարդեան» մասնաճիւղին կողմէ Յովսէփ Գաթրճեան տպաւորիչ առձգանութեամբ ասմունքեց Յովհաննէս Շիրազի «Հայոց Տանթական»-էն հատուած մը:

Բեմ հրաւիրուեցաւ օրուան բաւախօս Անտոն Գաթրճեան՝ ներկայացրելու օրուան խորհուրդն ու հրամայականը:

«Այսօր հոս մեզ համախմբողը»

անգամ մը եւս 24 Ապրիլն է, մեր պատմութեան ամենէն ցաւալի թուականը, բոլորս քաջ գիտենք, որ 24 Ապրիլը սոսկական օր մը չէ. ան Նահատակութեան, վերապրումի եւ իրաւունքի պատմութիւն է: 1915-1923 տարիներուն գործարկուած Հայոց Յեղասպանութեան հետեւանքը եղաւ հայ ժողովուրդի բնաջնջումը, պատմական հողերու մեծամասնութեան կորուստը եւ վերապրողներու սփռումը (ցրումը) աշխարհի գաւազան երկրամասերը: Գաթրճեան այնուհետեւ ակեցունց. «Անմարդկային հալածանքի եւ զանգուածային տեղահանութեան հետեւանքով արեւմտեան Հայաստանէն կտրուած Հայ ժողովուրդի արեւմտահայ հատուածը դարձաւ տարագիր, հաստատուեցաւ աշխարհի տարբեր անկիւններուն մէջ, դարձաւ Սփիւռք»:

Բանախօսը իր խօսքը եզրափակելով ըսաւ. «Եղեռնի գոհերուն յիշատակը վառ պահելու եւ յարգելու համար, առանց պայքարելու անհնար է ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման հասնիլ: Հաւատք, համոզում եւ նուիրում պէտք է մեր աշխարհներուն մէջ մեր ծրագիրներուն իրականացման համար, չիւստանալ լողունքներու, չտարուհիք մեծ խօսքերով, մենք մեզ չխաբենք անցեալի փառքերով, եւ վճռենք փոխուիլ եւ փոխել, մեր երիտասարդ բազուկներով ներդնենք մեր կարելին»:

Գեղարուեստական յայտագիրը շարունակուեցաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան երիտասարդներուն եւ պատանիներուն պատրաստած յայտագիրով: Անոնք ներկայացուցին Գեորգ Եմինի «Յաւերժի Ծամբող» բանաստեղծութիւնը, յայտագիրին մասնակցութիւն բերին Արվին Գաթրճեանէն «Կիլիկիա» մաղթերգով, ինչպէս նաեւ Ներսէս Մուրատեան «Տէր, Ողորմեա» շարականով, դաշնամուրի ընկերակցութեամբ Լիլիթ Նաճարի: Յայտագիրը ավարտին

հասաւ նազ պարով:

Ապա Սուրիահայ Օգնութեան Խաչի «Շուշի» Մասնաճիւղի անդամուհի Դալար Սեփեթեան-Մեյիսանեան ինքնապատի շեշտով ասմունքեց Դանիէլ Վարուժանի «Ձօն» բանաստեղծութիւնը:

Գեղարուեստական յայտագիրին վերջին բաժնով ելոյթ ունեցաւ Համագոյնի «Վահան Նաւասարդեան» մասնաճիւղէն Յակոբ Արզումանեան (դաշնամուր), հրաշալիօրէն նուագելով «Տլէ Եաման» եւ «Երեսուն Էրեբունի» կտորները:

Գեղարուեստական յայտագիրէն ետք, բեմավարուհին բեմ հրաւիրեց Արթ. Տ. Եզնիկ Զիւլ. Չղջանեանը՝ յղելու իր սրտին խօսքը:

Ոգեկոչական հանդիսութիւնը փակուեցաւ «Պահպանիչ» արօթքով:

Ս. ՊԱՏԱՐԱԳ...

Սկիզբ՝ էջ 9

Կերտելու սրբանուէր աշխատանքին լծուելու ենք, եւ գայն որդեգրելու ենք որպէս աստուածահաճող եւ հայալըպաստ ապրելակերպի ուղեգիծ: Մեր Նահատակները սրբադասուած են: Անոնք Աստուծոյ պատկերը արտացոլացնող ներկայութիւն են մեր կեանքին մէջ, ուստի կը թելադրեն որ չյուսալքուինք, մերժենք ամէն տեսակի խոչընդոտ, կառչած մասնք յոյսին, եւ արժեւորենք մեր կեանքը արդարութեան ու սրբութեան ձգելով, ահա այն ատեն մեր արդար իրաւունքներուն ձեռքբերման համար նպատակասլաց պայքար կը մղենք եւ մեր Նահատակներուն արեան կանչը լսելի կը դարձնենք ամենուրեք»:

Պատարագի ավարտին հնչեց «Կիլիկիա» մաղթերգը:

Թող սրբադասուած Նահատակներուն հաւատքի օրհնակը խօսուն ըլլայ ընդմիջտ, որպէսզի մեր առօրեային մէջ հայկականութիւն կերտենք եւ արժանաւորապէս կոչուինք հայրն հաւատքին ջահակիրները:

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Զարմիկ Զիւլպեռչեան-Պօղիկեան
Սրբագրիչ՝ Զեփիւռ Պապիկեան-Աւագեան
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան
Կայքէջի պատասխանատու՝ Ղազար Ղազարեան
Լուրերու պատասխանատու՝ Շահիկ Սրուրեան
Հաշուապահ՝ Սեւակ Կիւլվանեսեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:

021 2110 958 — www.kantsasar.com
kantsasarweekly@hotmail.com
www.facebook.com/kantsasar

Մարզական



Ռաֆֆի Միլախեան

ՏԵՂԱԿԱՆ

ՀՄԸՄ-ի Զարթոն Միշտ Աշխոյժ Եւ Կայտառ

Չորեքշաբթի, 18-4-2018-ին, Արամ Մանուկեան ժող. Տան «Շաւարշ Բրիսեան» քարաթէի սրահէն ներս տեղի ունեցաւ գօտիներու տուչութեան հանդիսութիւն:



Մարզիկները անցեալ ամսուան ընթացքին ներկայացուցին իրենց քննութիւնները, որոնց արդիւնքներուն համաձայն, դեղին գօտի ստացան 12 խաղող, նարնջագոյն գօտի՝ մէկ մարզիկ, իսկ սրճագոյն գօտի՝ երկու մարզիկ:

ՀՄԸՄ-ի քարաթէ-ի մարզիչներն են՝ Աւօ Պէլքանեան եւ Սեւան Երեցեան: Յիշեցք, որ ՀՄԸՄ-ի խումբի խաղողը եւ մարզիչ Աւօ Պէլքանեան, անցեալ ամսուան ընթացքին իր մասնակցութիւնը բերաւ Հալիպի ախոյեանական մրցաշարքի քարաթէի մրցումներուն եւ գրաւեց երկրորդ դիրքը: Մարտ 15-16-17-ին, ան իր մասնակցութիւնը բերաւ Նաեւ Դամասկոսի մէջ տեղի ունեցած Սուրիոյ ախոյեանութեան մրցումներուն եւ Սուրիոյ մակարդակով երրորդ դիրք գրաւեց:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Ծանօթացում Ռուսիա 2018-ի Մասնակից Հաւաքականներու Պատմականին

«Թիւ - 20»
Պելճիքա

Պելճիքայի Ֆուտբոլի Դաշնակցութեան պատմութիւնը սկսաւ 1895- ին, որմէ ինը տարի ետք, ան միացաւ Համաշխարհային Ֆուտբոլի, իսկ 1954-ին՝ Եւրոպայի Ֆուտբոլի Դաշնակցութեան: Միջազգային առաջին մրցումը կատարեց 1904-ին Ֆրանսայի հաւաքականին դէմ, որ աւարտեցաւ 3 - 3 հաւասար արդիւնքով: Համաշխարհային ֆուտբոլի մրցումներուն իր մասնակցութիւնը բերաւ 11 անգամ. լաւագոյն արդիւնքը նուաճեց 2014-ին՝ գրաւելով չորրորդ դիրքը: Պելճիքա նաեւ հինգ առիթներով իր մասնակցութիւնը բերաւ Եւրոպայի ախոյեանական մրցումներուն: Ներկայիս հաւաքականի մարզիչի պաշտօնը վստահուած է սպանացի Տիէրի Կոստիչի, օգնական ունենալով Ֆրանսայի հաւաքականի նախկին խաղող Թերի Զենրին: Հաւաքականի պաշտօնական տարագը կարմիր է: Անցեցեցք, որ 2018-ի ախոյեանութեան, Պելճիքայի խմբակին մաս կը կազմեն նաեւ Անգլիոյ, Փանամայի եւ Թունիսի հաւաքականները:



Միսթարեան Վերադարձաւ Ֆուտբոլի Փորձերուն

Անգլիոյ լոնտոնեան Արսենալի կիսապաշտպան Զենրիկ Միսթարեան, անցեալ շաբթուան ընթացքին բժիշկներու արտօնութիւնը ստանալէ ետք վերսկսաւ իր փորձերուն: Միսթարեան, մէկ ու կէս ամիսէ ի վեր կը բացակայէր խումբէն, ծանրապէս վնասուած ըլլալուն համար: Ան ենթարկուեցաւ բժշկական դարմանումներու: Իր կարգին, Արսենալի մարզիչ Արսեն Ֆենկեր պաշտօնապէս յայտարարեց, թէ ան վերջ տալով իր մարզիչի կեանքին, տարեշրջանի աւարտին պիտի հրաժարի իր պաշտօնէն: Անգլիական ակումբի մարզիչի պաշտօնը ստանձնելու գլխաւոր թեկնածուներէն մէկն է Գերմանիոյ ազգային հաւաքականի մարզիչ Իւսիմ Լով, թեկնածուներու անուններուն մէջ են նաեւ Թոմաս Թուխել, Գարլո Անչելոթի, Լուիս Էնրիքե Է Թերի Զենրի, որ ներկայիս կը վարէ Պելճիքայի հաւաքականի փոխմարզիչի պաշտօնը:



ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒՆ ՀԱԼԵՊ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԻՒՆ ՍՏԵՂԾԵՑ

Ա. Տարի, թիւ -38-

Եգիպտական բանակի ֆուտբոլի խումբին Հալիպայցիութիւնը մեծ խանդավառութիւն ստեղծեց պետական թէ հայ շրջանակներուն մէջ: Եգիպտացիք, որ շաբաթ մը ամբողջ հիւրը եղան ՀՄԸՄ-ին, արժանացան բոլորին գնահատանքին:

Եգիպտական խումբը կը գլխաւորէր Եգիպտոսի մեծագոյն գիւնուորականներէն մին՝ զօր. Ահմետ Հալիմ Իմամ: Բարձրաստիճան սպաներուն մէջ կը գտնուէին նաեւ գնդապետ Եահիա Իմամ, հրամանատար Մահմուտ Լաշին եւ հարիւրապետներ՝ Սուպիի Իւսէֆ, Մուհամմետ Ապտալա, Զասեմ Մըխթար ու 6 տեղակալներ: Եգիպտոսի գիւնուորականները մեծ ընդունելութեան եւ պատիւի արժանացան. անոնք յաջորդաբար այցելեցին Հալիպի տեսարժան վայրեր, Ազգ. Առաջնորդարան, Ազգ. Զարէն Եփփե Ճեմարան, ՀՄԸՄ-ի ակումբ, Նետի Արուպէի ակումբ եւ այլն:

ՀՄԸՄ-ի ակումբ այցելութեան ընթացքին, բարձրաստիճան սպաներ ՀՄԸՄ-ի ոսկեմատեանին մէջ իրենց արձանագրութիւնները ձգեցին՝ միշտ վեր առնելով հայ ժողովուրդի եւ ՀՄԸՄ-ի մարզական ոգին:

Ֆուտբոլի մրցումները յաջորդաբար տեղի ունեցան 11 եւ 12 Մայիս 1957-ին: Առաջին մրցումին, այցելու խումբը 15.000-ի հասնող հանդիսականներու ներկայութեան գեղեցիկ խաղարկութեամբ յաղթեց ՀՄԸՄ-ին: Երեքշաբթի օր Ահլի-ՀՄԸՄ խառն խումբին դէմ, խաղը դարձեալ Նոյն արդիւնքը տուաւ՝ 3-1 ի նպաստ հիւրերուն:


Երեքշաբթի, մրցումէն ետք, երեկոյեան, ՀՄԸՄ-ի վարչութիւնը շքեղ ճաշկերոյթ մը սարքեց Նետի Սաատի մէջ, որուն ներկայ գտնուեցան Հալիպի նահանգապետը, հիւսիսային Սուրիոյ բանակի ընդհանուր հրամանատար զօր. Օմար Խան Թամեր, եգիպտական պատուիրակութեան պետ զօր. Ահմետ Հալիմ Իմամ, գնդապետներ՝ Եահիա Իմամ, Ահմետ Նիսազի, ինչպէս նաեւ հրամանատար Մահմուտ Լաշին, տեղեկատուական գրասենեակի տնօրէն Շաուքի Սալահիէ, ոստիկան զօրաց հրամանատարը, քաղաքապետը եւ բազմաթիւ պետական անձնաւորութիւններ, ազգայիններ, ՀՄԸՄ-ականներ եւ եգիպտական բանակի ու ՀՄԸՄ-ի ֆուտբոլիստներ:

Ճաշկերոյթի ընթացքին ՀՄԸՄ-ի վարչութեան կողմէ ուղերձ արտասանեց Եղբ. Կարպիս Նալպանտեան, վեր առնելով մարզական գետնի վրայ եգիպտացի եւ սուրիացի ժողովուրդներուն փոխյարաբերութիւնը, շնորհաւորեց եգիպտական պատուիրակութիւնը իր գեղեցիկ խաղարկութեան եւ ՀՄԸՄ-ի հրաւերին դրական կերպով պատասխանած ըլլալուն համար: Ան իր խօսքը աւարտեց բարի ճանապարհ մաղթելով հիւրերուն: Եղբ. Կարպիսի ուղերձին պատասխանեց եգիպտական պատուիրակութեան պետ՝ զօր. Ա. Հալիմ Իմամ եւ շնորհաւորեց ՀՄԸՄ-ի պատասխանատուները, որոնք եգիպտական խումբ մը առաջին Սուրիա հրաւիրողները եղան: Ան մաղթեց որ ՀՄԸՄ-ի մարզիկները այցելէն նաեւ Եգիպտոս եւ ֆուտբոլի կարգին ունենան նաեւ մարզական ուրիշ խաղեր: Չօրավարին ուղերձէն ետք, խօսք առաւ նահանգապետ Իմամիլ Զուլի, որ շեշտը դրաւ երիտասարդութեան պարտաւորութեան վրայ:

Սոյն երեկոյթին, ՀՄԸՄ-ի կողմէ գեղեցիկ արձանիկ մը նուիրուեցաւ եգիպտական խումբին, որուն փոխարէն հիւրերը Հալիպի աւագ անիին եւ ՀՄԸՄ-ի ղեկավարներուն նուիրեցին Ապտուլ Նասերին պատկերով խորհրդանշական ափսէներ, իսկ ներկաներուն՝ բազմաթիւ մետալներ ու կրծքանշաններ:

Ճաշկերոյթը վերջ գտաւ ժամը 11:00-ին: Հիւրերը հրաժեշտ տուին յաջողութեան լաւագոյն մաղթանքներով:

Եգիպտական պատուիրակութիւնը Հիւնզաբթի առաւօտեան ինքնաշարժով Դամասկոս մեկնեցաւ, հոնկէ ալ օդային ճամբով Գահիթէ մեկնելու համար:



ՀԱԼԵՊԱԶԱՅՈՒԹԻՒՆ...

Սկիզբ՝ էջ 1

մայնքապետներուն, Սուրիական հորիորդարանի երեսփոխան Ժիրայր Ռէիսեանի, Հայաստանի Հանրապետության Հալէպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգիսեանի, հալէպա-



հայ կազմակերպութիւններու, Բերիոյ Հայոց Թեմի ազգային մարմիններու, հալէպահայ միութիւններու ներկայացուցիչներուն, արժանապատիւ քահանայ հայրերուն, առաքինազարդ քոյրերուն եւ հոծ բազմութեան:

Աւանդութիւն դարձած սոյն կերպով հայտնաբերուած սոյն կերպով հանդիսու-



թիւնը նախանձախնդրօրէն պատրաստուած էր: Հալէպահայ գործող միութիւններուն միատեղ բոլորումով յայտագիրը սկիզբ առաւ հայրենի եւ պետական օրհներգներով, ապա հանդիսատեսները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին յիշատակը Հայոց Յեղասպանութեան սրբադասուած հայ նահատակներուն:

Բեմավար՝ Գեորգ Շահինեանի հրաւերով բեմ բարձրացաւ Սեւան Սիսեռեան-Եղիայեան արտասանելու արաբերէն բացման խօսքը:

Ան իր խօսքին մէջ վեր առաւ մեր դարաւոր թըշնամիին՝ թուրքին շարդարար եւ անմարդկային արարքներուն ահաւոր հետքերը, սակայն նկատել տուաւ, որ հայ ժողովուրդը շնորհիւ աննկուն կամքին եւ գանձազան բնագաւառներէն ներս ստեղծագործ աշխատանքին, կը շարունակէ իր ներկայութիւնը վեհ պահել:

Այնուհետեւ հայերէն բացման խօսքով հանդէս եկաւ Կարպիս Երանոսեան: Ան դիտել տուաւ, որ հարիւր երեք տարի առաջ թրքական եաթաղանին տակ զոհ ինկած հայ ժողովուրդը ո՛չ միայն վերապրեցաւ, այլ վերանորոգուելով իր ուղին ճշդեց եւ ստեղծեց իր եռուն կեանքը՝ յաղթահարելով բազում դժուարութիւններ, դիմագրաւելով այլազան մարտահրաւերներ եւ ստեղծեց մայր հայրենիքը՝ միշտ հաւատարիմ մնալով մեր ազգային արժէքներուն: Ապա իր երախտագիտութիւնը յայտնեց սուրհացի արաբ ժողովուրդին, որ գրկաբաց ընդունեց եւ սատար հանդիսացաւ հայուն ծաղկումին եւ վերելքին,

ինչպէս նաեւ առիթը ընծայեց արդար դատի պահանջատիրական ոգիով սերունդներ դաստիարակել:

Գեղարունեստական յայտագիրը ընթացք առաւ Համագայինի «Չուարթնոց» երգչախումբի բարձրորակ երգեցողութեամբ, ուր յաջորդաբար ներկայացուցին «Թող Պլպուլ Չերգէ», «Պիտի Պաշտպանեմ», «Տուն Իմ Հայրենի» եւ «Ախպերս ու ես» երգերը, գեղարունեստական դերակատարութեամբ Գայիանէ Սիմոնեան-Տերեանի: Երգչախումբին դաշնամուրով կ'ընկերակցէր Ռուզան Պարսումեան: Անոնք ոչ միայն երգեցին, այլեւ ներկաները առնչեցին արունեստի հմայքին ու պարուրեցին զիրենք հայրենասիրութեամբ:

Սրտառու էլ եւ հմայիչ էին հրամանատար թէ՛ արաբերէն եւ թէ՛ հայերէն ասմունքները: Գեորգ Եմիլի «Մենք»ը ասմունքեց Փառամազ Զորպաճեան, իսկ արաբերէն «Չես կրնար ջարդել զիս երկրորդ անգամ» արաբերէն քերթուածը՝ հեղինակ Արա Մութաֆեան:



Հե Ընկերակցութեան Կոմիտասի անուան քառեակը իր գեղեցիկ, միաժամանակ հանդիսատեսը յուզող կատարումով հանդէս եկաւ: Դաւիթ Մելքոնեան (ջութակ), Շահեաւագեան (ջութակ), Սաֆօ Աւագ-



եան (ջութակ) եւ Կարօ Արսլանեան (թաւ ջութակ), քառեակը, յաջորդաբար ներկայացուցին Ռախմանիտովի «Վոզախոգ»ը եւ Կոմիտասի «Երկինքն Ամպել ա», եւ «Բելե-Բելե» կտորները:

Հայոց Յեղասպանութեան նուիրուած սոյն ոգեկոչական հանդիսութեան խորհուրդը ներկայացուց Սիլվա Օհանեան, որ ներկաները ողջունել էտք ըսաւ. «103 տարիներ առաջ, թուրք պետութեան կողմէ ծրագրուած եւ աստիճանաբար իրագործուած հայոց բռնի տեղահանութիւնն ու ցեղասպանութիւնը Ապրիլի 24-ին իր գագաթնակէտին հասաւ: Համիտեան ջարդերէն, Ատանայի կոտորածէն ետք, 23 Ապրիլին հայ ժողովուրդը ունեցաւ իր պատմութեան ամենէն սեւ օրերը: Անցեալը չէ մոռցուած՝ վկայ Տէր Զօրի անապատները: Պիտի յիշենք ու պիտի պահանջենք: Յիշելու համար պէտք է քաջատեղեակ ըլլանք հայոց պատմութեան, դասեր քաղենք անցեալէն եւ այդ բոլորը կարենանք արժէտորէրէր»:


այս օրուան տուեալներով:

«Հակառակ համատարած կոտորածներուն հայ ժողովուրդը կրցաւ վերականգնել զոյատեւելու կամքով եւ վերապրիլ: Ան Սիհիռք դարձաւ եւ ուժերը վերստին հաւաքելով կառուցեց Նորը, օտար հողի վրայ, շէնցուց իր ապաստանած հողը: Հալէպահայն ալ անմասն չմնաց այս յառաջընթացէն: Ան ձեռք երկարեց տեղացի արաբ ժողովուրդին եւ շէնցուց ու զարգացուց Սուրիական սիրելի Հայրենիքը: Սակայն ճգնաժամային վեր-



ջին տարիներու դէպքերուն հետեւանքով, կրկին գաղթականութեան ցուպը ձեռքին, բռնեց գաղթի ճամբան:

«Պատմութեան էջերը ընթերցելով տարբեր մեկնաբանութիւններու կը հանդիպինք Կովկասի շրջանին այդ օրերու դէպքերուն մասին: Սակայն փաստը կը մնայ այն, որ հայ ժողովուրդը պայքարեցաւ յանուն անկախ Հայաստանի, ապա 30 տա-



րի առաջ յանուն ազատ Արցախի, իսկ 26 տարի առաջ հռչակեց Հայաստանի ազատ անկախ Գ. Հանրապետութիւնը:

«Ներկայ օրերուն, Հայաստանի Հանրապետութիւնը կը թելակոխէ Նոր փուլ մը՝ բարեփոխումներու փուլ մը, ուր բարձր կը դասուին հայ ժողովուրդին շահերը, անոր բարօրութիւնը իր անկախ հայրենիքին մէջ: Անհրաժեշտ է նաեւ որ երաշխաւորուած ըլլան Արցախի անվտանգութիւնն ու մեր պետականութեան կայունութեան ամրապնդումը»:

Այնուհետեւ Հայաստանի Հանրապետութեան անունով խօսք առաւ Հալէպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգիսեան, որ դիտել տուաւ, թէ «Հայոց Յեղասպանութենէն հարիւր երեք տարի ետք, հայու ոգին անկոտորում է, զոհերու յիշատակը տակաւին վառ է մեր սիրտերուն մէջ, եւ հայ ժողովուրդը ունի շարք մը իրագործելի պարտաւորութիւններ: Յեղասպանութեան յանցագործութեան դէմ միջազգային պայքարը պէտք է Նոր թափ ստանայ՝ ձեռք բերելով Նոր բովանդակութիւն եւ կիրառելով կանխարգիլման արդիւնաւէտ միջոցներ: Մենք համախմբուածութեամբ, միասնական բռունցքով աշխարհին պէտք է ներկայանանք որպէս մէկ ազգ, որովհետեւ մենք այս օրերուն հասանք պայքարելով, մաքառելով եւ ստեղծագործելով»:

Ապա հաստատեց, որ Հ.Հանրապետութիւնը Հայոց Յեղասպանութեան ուղիով ծրագրած աշխատան-


քը պիտի շարունակէ եւ իւրաքանչիւր ներդրում պէտք է բերենք անոր՝ միասնականութեան ոգիով տողորուած:

Հունկ, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գեորգ Տ.Շահան Սրբ.Արք.Սարգիսեան հանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց. «Հայոց Յեղասպանութեան հարիւր երեքերորդ հանդիսաւոր այս հաւաքը չի նմանիր նախորդ տարիներուն, այսինքն՝ համայնքային եւ միութենական ձեռնարկներ եւ ապա



ընկալելով առօրեայով վերադարձ մեր բնակատեղիները, սա մեր ձախողութեան ցուցանիշն է: Կաղապարուած մտքերով ընդունիլ մեր իրավիճակը, կարծելով որ բոլոր հարցերը լուծած ենք եւ ունենալ այն ենթադրութիւնը որ ազգերը կը դողացնենք ու միջազգային ընտանիքը

մեր բողոքներուն ականջ պիտի կախու՛ միասնութիւնն է: Ազգային մեր իրավիճակը այլ պատկեր կը ներկայացուն: Ընդունիլ իրավիճակը կը նշանակէ հրաժարիլ պահանջատէրի մեր կեցուածքէն, ընդունիլ, թէ 103 տարի առաջ մեր հայրենիքի գաւաթները իրենց ծննդավայրէն դուրս շարժուելէն ետք, մենք պարզապէս հաւատարիմ մնալով անոնց աւանդին,



բոլոր հարցերը լուծած պիտի ըլլանք միասնութիւնն է:

«Աշխարհը անողոք կացութեան մէջ է: Միջին Արեւելքի պատկերը այդքան ալ պարզ չէ: Մեր ոգեկոչական ձեռնարկները շարունակելով հանդերձ ինքնաքննութեան եւ ինքնաքննադատութեան իրաւերին դէմ յանդիման ենք այսօր:

«Մենք եթէ չգօտեպնդուինք, մեր սխալները չընդունինք եւ քննութեան չենթարկենք մեր ընթացքը, չենք կըրնար ըսել թէ իսկապէս պահանջատէր ենք: Պահանջատիրութիւնը սոսկ արձագանգ մը չէ, որ բեմէն կ'արտասանուի: Պահանջատիրութիւնը ամենօրեայ ապրումն է գործունէութիւնն է: Նպատակաւ պայքարելու եւ նպատակաւորութեան գործունէութիւնն է:

«Պէտք է մեր մտածելակերպը փոխել եւ եթէ կրնանք մեր մտածումը գործի վերածել, այն ատեն ոչ միայն յիշատակած կ'ըլլանք մեր նահատակները, այլեւ պահանջատէր մեր արդար դատին եւ իրաւունքներուն»:

Սրբազան հայրը անդրադառնալով Հայաստանի ներկայ զարգացումներուն ըսաւ, որ 25 Ապրիլը 23 Ապրիլ չէ այլեւս, մենք Նոր կացութեան դիմաց կը գտնուինք, Հայաստան ապրող սուրիահայութիւնը եւս Նոր կացութեան դիմաց պիտի յայտնուի, ուրեմն բարին մաղթենք մեր հայրենիքին ու ժողովուրդին:

Ոգեկոչական հանդիսութիւնը փակուեցաւ Սրբազան Զօր «Պահպանիչ» աղօթքով: